Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հեղագրի իրավունքով

ԱՆԴՐԲԱՄԲԱԿՄԻՈՒԹՅՈՒՆ
ԲԱՄԲԱԿԱՀՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՏՐԵՍՏ
ԱՆԴՐԲԱՄԲԱԿՏՐԵՍՏ

ՀՐԱՀԱՆԳ

ԲԱՄԲԱԿԱՀՏԻՉ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՆ 1931 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

38
Հ-94

ԹԻՖԼԻՍ — 1931

38
Հ-94

623057

Ա.Ֆ.Մյասնիկյանի անվ. տպ հրատ. Զարյա Վոստոկա՞-ի, Ռուսթ. 36

Պատվեր 2524. Գլավլիտ 1927 Գանակ 400.

06 APR 2010

1931 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՇԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ա.Ս.Ֆ.Խ.Հ. Ժողկոմխորհի յեվ Հ.Կ.Կ. (բ) Ռ.Նդրյերկկոմի վորոշումը)

I

Առաջիկա բամբակահավաքի և բամբակամթերման կամպանիան հանդիսանում է ԱՍՖԽՀ բամբակային շրջանների կուսակցական, խորհրդային, տնտեսական և կոլտնտես-կոոպերատիվ կազմակերպությունների վճռողական տնտեսա-քաղաքական խնդիրը:

Սոցիալիստական հատվածի խաչոր դերակշռումը բամբակագործական շրջաններում, բամբակացան մակարդակների աճը, հում բամբակի առաջիկա բերքի հսկայական աճը բացառիկ նշանակություն են տալիս բամբակի հավաքի ու մթերման կամպանիային, վոր պետք է տարվի ժողովրդական տնտեսության կարևորագույն խնդիրը վճռելու՝ ՍՍՀ Միությունը արտասահմանի բամբակի կախումից ազատագրելու՝ նշանի տակ:

Բամբակամթերման կամպանիան ընթանալու է դասակարգային թշնամու կատաղի դիմադրության պայմաններում, վոր ամեն կերպ ճգնելու է վիժել հավաքի-մթերման պլանի կատարումը:

ՀԿԿ(բ) Ռնդրյերկկոմը և Ռնդրժողկոմխորհը հրավիրում են բոլոր կուսակցական, խորհրդային,

54. 894
14 JUN 2013

տնտեսական և կոլտնտես – կոոպերատիվ կազմակերպությունների ուշադրությունը, վոր բերքահավաքի աջող լուծումը կախված է կոլտնտեսական և անհատական չքավոր–միջակ զանգվածների լայն մոբիլիզացիայից՝ հում բամբակը հավաքելու և սահմանված ժամկետին պետությանը հանձնելու պլանը կատարելու և գերակատարելու շուրջ:

Բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական և կոլտնտես – կոոպերատիվ կազմակերպությունները պետք է անմիջապես անցնեն աշխատանքի մարտական և հարվածային տեմպերի՝ բամբակահավաքի և մթերման կամպանիայի նախապատրաստական ձեռնարկումները կիրառելու գործում, լայն զարգացնելով աշխատանքի սոցիալիստական ձևերը կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում ու անհատական չքավոր–միջակ տնտեսություններում՝ մեծագույն չափով ոգտագործելով բոլոր ունեցած միջոցները:

Բամբակի առաջիկա հավաքի ու մթերման կամպանիայի առթիվ, կուսակցական, խորհրդային և կոլտնտես–կոոպերատիվ կազմակերպությունները պետք է անմիջապես լայն մասսայական բացատրական աշխատանք ծավալեն անհատականների բատրակ – չքավոր և միջակ զանգվածների շարքերում՝ կոլտնտեսությունների մեջ նրանց ներգրավելու համար, բոյչևիկորեն կապակցեն բերքահավաքի կամպանիայի պլանների կատարումն ու գերակատարումը գոյություն ունեցող կոլտնտեսությունների հետագա սմրացման, կոլտնտեսական շարժման նոր հզոր վերելքի կազմակերպման խնդիրների հետ «այն հաշվով, վոր կոլեկտիվացումը հիմնականում ավարտվի 1932 թվին»: (ՀԿԿ(բ) Կենտկոմի ոգոստոսի 2–ի վորոշումը):

II

Հաստատել հում բամբակի առաջիկա հավաքի պլանն Անդրկովկասում՝ 216·000 տոննն, վորից գյուղացիական հատվածում՝ 192·450 տոննն ջրվող բամբակ, 1·550 տոննն բաղարա (չջրվող) և 22·000 տոննն խորհտնտեսություններում:

Հանրապետություն	Ջրվող բամբակ	Չ'ջրվող բամբակ	Խորհտնտես. բամբակ	Ընդամենը
ԱՍԽՀ	157.200	1.170	17.130	175.500
ՀՍԽՀ	25.850	—	740	26.599
ՎՍԽՀ	9.400	380	4.130	13.910

Սահմանել 1931 թվի բերքի հում բամբակի հետևյալ տեսակներն ու դները բամբակաբույծների հետ հաշիվ տեսնելու համար:

1–ին տեսակ—78%. փթի գինը 5 ռ. 11 կ.
2–րդ » —12%. » » 4 ռ. 75 կ.
3–րդ » —10%. » » 4 ռ. 37 կ.

Կտորանքը առանց տեսակավորման ընդունել կիլոգրամմը 25 կոպ.:

Անդրբամբակմիությունն Անդրկոլտնտակենտրոնի և Անդրտրակտորկենտրոնի հետ միասին, վերև ընդունված տեսակների համեմատ, սեպտեմբերի 1–ից վոչ ուշ պետք է մշակե հում բամբակի հատկանիշները (ստանդարտ):

Նույն կազմակերպությունները 5 որում վորոշելու յեն ընդունվող հում բամբակի խոնավության ու աղտոտության նորմաներն և այն դեպքում, յերբ բամբակարույծները հանձնում են վորոշված նորմաներից ավելի խոնավություն և աղտ պարունակող բամբակ, կատարել դեղջ յուրաքանչյուր կիլոգրամից մինչև 3 կոպ.:

Սահմանել հում բամբակի հավաքի և մթերման հետևյալ ժամկետները. սեպտեմբերին՝ 3 տոկոս, հոկտեմբերին՝ 45 տոկոս, նոյեմբերին՝ 45 տոկոս և դեկտեմբերի առաջին կեսին՝ 7 տոկոս, այնպես վոր մթերման ամբողջ կամպանիան ավարտվի 1931 թվի դեկտեմբերի 15-ից վոչ ուշ:

Անդրբամբակիությունն և Անդրբարակորկենտրոնը հիշյալ ժամկետների համեմատ մշակելու յեն շրջանային տասորյակային պլաններ և վերջիններս, հանրապետական ԺԿԽ-ների կողմից հաստատվելուց հետո, հասցնելու յեն մինչև շրջաններն և Մեքենա-Տրակտորային կայանները (ՄՏԿ) ոգոստոսի 15-ից վոչ ուշ:

Շրջկուսակամակերպությունները և շրջգործկոմները, ՄՏԿ-ների հետ միասին, բերքահավաքի կամպանիայի պլանները պետք և հասցնեն մինչև գյուղ, կոլոնտեսություն սեպտեմբերի 1-ից վոչ ուշ:

Առաջարկել բոլոր շրջկուսակամակերպություններին և շրջկոլոնտամիություններին բերքահավաքի պլանի քննությունը կապակցել ամեն մի կոլոնտեսության բերքահավաքի ժամանակաշրջանի աշխատանքային կոնկրետ պլանների կազմության

հետ և վոչ ուշ, քան սեպտեմբերի 1-ը միանգամայն պատրաստ ունենալ ապրան (տառան), փոխադրության միջոցները, նմանապես նշանակել համապատասխան ղեկավարներ-բրիգադիրներ և կազմակերպել պատշաճ հրահանգում:

III

Բերքահավաքի կամպանիան աջողությամբ անցկացնելու կարևորագույն պայմաններից մեկն է հանդիսանում խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում և անհատական տնտեսություններում ամբողջ բանվորական ուժի լիակատար ոգտագործումը՝ աշխատանքի լավագույն կազմակերպության հիման վրա, բամբակային բոլոր շրջաններում ճիշտ նորմաների սահմանումը, գործավարձի և իրոք կատարված աշխատանքի քանակի ու փորակի ճիշտ հաշվառքի կիրառումը, աշխատանքի սոցիալիստական ձևերի լայն գործադրումը (սոցմրցում, հարվածայնություն, հասարակական բուքսիր):

Անդրհողժողկոմատն և Անդրկոլոնտակենտրոնը հանրապետական կազմակերպությունների հետ միասին, մինչև բերքահավաքի կամպանիայի սկիզբը, ապահովելու յեն գործավարձի լրիվ ներմուծումը կոլտնտեսությունների բերքահավաքի ամեն տեսակ աշխատանքներում:

Անդրհողժողկոմատը, Անդրկոլոնտակենտրոնն և Անդրբարակորկենտրոնը, վոչ ուշ, քան մինչև ոգոստոսի 20-ը սահմանելու յեն բոլոր բերքերի հավաքի կամպանիայի ամեն տեսակ աշխատանքների արտա-

դրանքի նորմաներ. պայքար մղելով նվազագույն նորմաների դեմ, վորոնք փաստորեն կազմալուծում են կոլտնտեսների լայն զանգվածները: Բամբակի բոլոր հավաքների աշխատանքների համար վորոշել ամող գնահատություն աշխատաորերով: Կոլտնտեսությունների վարչությունները բերքահավաքի ամբողջ ժամանակաշրջանում յուրաքանչյուր բամբակային հողամաս և ինվենտար ամրացնելու յեն առանձին բրիգադի տրամադրության ներքո:

Պարտավորեցնել կոլտնտեսությունների վարչություններին յուրաքանչյուր հավաքից հետո բրիգադների միջոցով ստուգման յենթարկել կատարված աշխատանքի վորակը, աշխատանքի լավ վորակի և ժամանակին կատարելու համար սահմանել մրցակիցներ՝ աշխատաորերի վրա 25 տոկոս լրացուցիչ հավելումներ մտցնելով, իսկ ժամանակին չկատարելու և վատ վորակի համար՝ աշխատաորերը պակասեցնել:

Հ. Կ. Կ. (բ) Անդրյերկոմն և Անդրժողկոմխորհը նշում են, վոր մի շարք շրջկազմակերպությունների կողմից մինչև այժմ նկատվում է կոլտնտես և անհատական կանանց աշխատանքի կազմակերպման և մաքսիմալ ոգտագործման հարցի խոշոր քաղաքական նշանակության թերագնահատում:

Շրջանային կուսակցական, խորհդային և կոլտնտես կազմակերպությունների լայն մասսայական աշխատանքը, կանանց բանույժը կոլտնտեսությունների դյուղացիական ամեն տեսակ աշխատանքների մեջ գործադրելու վճռական ձեռնարկումների կիրառում և սոցիալ – կենցաղային հիմնարկների լայն ծավալումը (մանկամսուրներ, մանկապարտեզներ, հասարակական ճաշարաններ, հասարակական սնունդ դաշտային աշխատանքների ժամանակ և այլն) հանդիսանում են բամբակահավաքի կամպանիայի աջող կատարման հիմնական պայմաններից մեկը:

Առաջարկել կուսակցության Կ. Կ.-ներին և շրջկոմներին, Անտրկոլտնտեսենտրոնին և հանրապետությունների կոլտնտեսենտրոններին՝ անմիջապես ծավալել բամբակային շրջաններում մանկական հիմնարկների կազմակերպման աշխատանքն այն հաշվով, վորպեսզի նրանցով հիմնականում ընդգրկվեն բոլոր կոլտնտեսությունները:

Անդրբամբակմիությունն անմիջապես պետք է նախագծե բանվորական ույժի կոնտինգենտի ներկայությունը խորհտնտեսություններում՝ ճշտությամբ վորոշելով բանույժի պակասորդի քանակը յուրաքանչյուր խորհտնտեսության մեջ առանձին: Պարտավորեցնել խորհտնտեսությունների տեսուչներին, կոլտնտեսությունների հետ պայմանագիր կնքելու հիմունքով, ժամանակին ավարտել բանույժի ժողովույթը՝ բերքահավաքի պլանի լրիվ կատարումն ապահովելու համար:

Անդրաշխժողկոմատն Անդրբամբակմիության և Անդրկոլտնտեսենտրոնի հետ միասին հինգ որում վորոշելու յե բանույժի ժողովույթի շրջանները: Շրջկոմներն և շրջգործկոմները, ինչպես նաև կոլտնտեսական սիստեմն այն շրջանների, վորտեղ կատարվելու յե բանույժի ժողովույթ, այդ գործում ամեն տեսակ աջակցություն են ցույց տալու խորհտնտեսություններին:

Բոլոր կազմակերպություններն և խորհրդատեսությունների տեսուչները, մինչև բերքահավաքի սկիզբը, գյուղատնտեսական աշխատանքների բոլոր տեսակները վերածելու են խիստ գործավարձի սիստեմի, սահմանելով արտադրանքի վորոշ նորմաներ, և աշխատավարձի նորմաները հասցնելու են ամեն մի ագարակի, հողամասի և բանվորի, ձգտելով մեծապես բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Անդրբամբակմիությունը ձեռք է առնելու բոլոր միջոցներն Անդրկովկասի համար նախագծված բամբակահավաք մեքենաների ներմուծումն արագացնելու համար: Այդ մեքենաները բաշխելիս, ապահովել նրանց մեծագույն մասի ուղղումն բամբակային խորհրդատեսություններին: Բամբակահավաք մեքենաների ներմուծումը պետք է անմիջական կախումն ունենա այդ շրջանների բանույժի բեռնավորումից:

Բերքահավաքի կամպանիայի ժամանակաշրջանում Անդր. Մատակարարման Ժողկոմատն և Անդրկոոպմիությունը խորհրդատեսությունների բանվորներին ապահովելու են անընդհատ մատակարարումով և բարելավելու հասարակական սննդի կազմակերպումը: Այդ աշխատանքի համար խորհրդատեսությունների տեսուչները հատկապես նշանակելու են իրենց տեղականներից մեկին:

IV

Անդրտրակտորկենտրոնը պետք է ապահովի ՄՏ կայանների կազմակերպչական – տեխնիկական պատրաստականությանը, վորոնք հանդիսանում են հում բամբակի հավաքի և փոխադրության հիմնական կազմակերպիչներից մեկը: Մխաժամանակ շրջկուսակազմակերպությունները բարելավելու են ՄՏ կայանների ղեկավարությունը, ստեղծելով նրանց աշխատանքի համար բոլոր անհրաժեշտ պայմանները՝ բամբակահավաքի պլանն աջողությամբ իրագործելու նպատակով:

Անդրտրակտորկենտրոնի վրա դնել նրա կողմից սպասարկվող կոլտնտեսությունների և արտադրական ընկերությունների բամբակի հանձնումը (վաճառումը) կազմակերպելու պատասխանատվությունն և սպասարկվող կոլտնտեսությունների ու արտադրական միավորումների բամբակի հանձնելու պլանը ժամանակին կատարելու պատասխանատվությունը՝ կոնտրակտացիոն պայմանագրերի համաձայն: Անդրբամբակմիության վրա դնել՝ կոլտնտեսությունների և արտադրական ընկերությունների հետ նրանց կողմից հանձնվող բամբակի թե՛ դրամական և թե՛ բնաուր հաշիվները ժամանակին կատարելու, ինչպես նաև կանխավճարների ու պարտքերի գանձման պատասխանատվությունը:

Առաջարկել Անդրբամբակմիությանը, Անդրտրակտորկենտրոնին և բամբակարուծական կոոպերացիային՝ տասնորյակի ընթացքում վերջնականապես ավարտել բամբակաղործների հետ ընթացիկ տարվա համար կնքված բոլոր կոնտրակտացիոն պայմանագրերի հանձնումն և ընդունումը բամբակարուծական կոոպերացիայից: Կոնտրակտացիոն պայմանագրերը կենտրոնացնել Անդրբամբակմիության սիստեմի դնման կայաններում:

Պարտավորեցնել Պետբանկին՝ ապահովել հաշվեդրամարկղների բացումը ժամանակին, գնման կայաններին կից։ Հ. Կ. Կ. (բ) Անդրյերկկոմի կադրերի բաժինը հաշվեդրամարկղներն ապահովելու յե համապատասխան աշխատավորներով։

Նշելով հաշվառքի ու հաշվետվության չափազանց ընդարձակ սիստեմը և հում բամբակի ընդունելության կետերում բամբակաբույծների հետ ունենալիք հաշիվների ձևերի բարդությունը, առաջարկել Անդր. Բան.-Գյուղ.-Տնտ. Անդրբամբակմիության հետ միասին վերանայել մինչև ոգոստ. 20-ը հաշվառքի ու հաշվետվության գոյություն ունեցող ամբողջ սիստեմն ընդունելության կետերում և դյուրացնել ամբողջ տեխնիկան, սահմանելով ընդունման պարզ կարգ։

Առաջարկել Անդրբամբակմիությանը՝ հաստատել գնման կայանների ցանց՝ թվով 55 մշտական գործող և, բացի այդ, 15 շարժական։ Հում բամբակի փոխադրության շառավիղը սահմանել 15 կիլոմետր։

10-ը կիլոմետրից ավելի փոխադրության արժեքը կատարել Անդրբամբակմիության հաշվին։

Գնման կայանների և բամբակի կրպակների կառուցման գործում տեղի ունեցող ձգձգումների նկատառումով, առաջարկել Անդրբամբակմիությանն և Անդրտրակտորկենտրոնին 5 որվա ընթացքում հայտնագործել հարկավոր փայտեղենի և մյուս նյութերի քանակն ու ապահովել այդ շինարարություններն ստացվող փայտանյութերով առաջին հերթին։ Միաժամանակ պարտավորեցնել հանրապետությունների ԺԿԽ-ներին՝ ապահովել բամբակի կրպակների կառուցման համար, բամբակի կոոպերացիայի պահանջներով հատկացված ֆոնդերի անմիջական տրամադրումն Անդրբամբակմիության տնօրինության տակ։

Հում բամբակի հանձնումը պարզ և դյուրին դարձնելու նպատակով, առաջարկել Անդրբամբակմիությանն և Անդրտրակտորկենտրոնին՝ գնման կայաններին կցորդել առանձին կոլտնտեսություններ և արտադրական ընկերություններ, չխախտելով սակայն վարչական շրջանների սահմանները։

Վերացնել բարդությունները բամբակաբույծներին վճառելու սիստեմը, վորոշելով ժամանակավոր ոգտագործման տալու կարգը՝ հում բամբակը հավաքելու և հանձնելու համար։ Անդրբամբակմիությունն ապահովելու յե պարկերի հանձնումը բամբակաբույծներին բերքատվության համեմատ, յուրաքանչյուր պարկի 4 շրջանառության հաշվով, սահմանելով տուժանք չվերադարձնելու դեպքում։

V

Արձանագրելով, վոր անցած տարում շրջանային խորհրդային կազմակերպությունների անպատասխանատու վերաբերմունքի պատճառով բամբակի բավական մեծ տոկոսը տրորվեց անասունների կողմից, նույնի կրկնությունից խուսափելու համար առաջարկել հանրապետությունների ԺԿԽ-ներին՝ յերկու տասնորյակի ընթացքում վերանայել իրենց վորոշումները տրորման դեմ պայքարելու վերաբերյալ, ուժեղացնելով տեղական, շրջանային և գյուղական, վարչության և տրորողների պատասխանատվությունը, կանգ չառնելով չարամիտ տրորողների գույքի բռնագրավ-

ման առաջ՝ կուլակային — ունևոր տնտեսությունների շարքերից։

Վերահաստատել Անդրժողկոմխորհի 1930 թ. սեպտեմբ. 24-ի վորոշումը՝ «Հում բամբակի տեղանիստի դեմ պայքարելու միջոցների մասին», սահմանելով բամբակաբույծներին գնման կայանների միջոցով բամբակային լինտեր բաց թողնելու կարգը, միջին հաշվով մի տնտեսությանը 3 կիլոգրամ։

Առաջարկել Անդրբամբակմիությանը մի տասնօրյակում ներկայացնել Անդրժողկոմխորհին կոնտրակտացիոն պայմանագրերի կատարումից խուսափողների և բամբակը չարամտորեն չհանձնողների դեմ պայքարելու միջոցների մասին վորոշման նախագիծ։

Պարտավորեցնել բամբակային շրջանների կուսակցական շրջկոմներին և շրջգործկոմներին սիստեմատիկ և խիստ հսկողություն սահմանել՝ կուլակային — ունևոր տնտեսությունների կողմից հում բամբակը ժամանակին հանձնելու վերաբերյալ նրանց տրված հաստատուն առաջադրանքները լրիվ կատարելու համար։

VI

Արձանագրելով ճանապարհների ծայրահեղ անբարեշինությունը բամբակային շրջաններում, մասնավանդ Սալյան — Մուղանի շրջանում ու դաշտային Ղարաբաղում, և ճանապարհների համարյա լիակատար բացակայությունը խորհտնտեսություններում, ինչպես դեպի խորհտնտեսությունը տանող, նույնպես և խորհտնտեսության ներսը, վոր լուրջ սպառնալիք է ներկայացնում հում բամբակը դեպի գնման կայաններն և բամբակային գործարանները ժամանակին փոխադրելու համար, ու նշելով. համապատասխան ուշադրության բացակայությունն ինչպես Անդրբամբակմիության, նույնպես և Անդրճանապարհի ու հանրապետությունների ժողկոմխորհների կողմից, նմանապես և շրջանային կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների կողմից դեպի բամբակային շրջանների ճանապարհների շինարարության հարցերը, Անդրյերկկոմը և Անդրժողկոմխորհն առաջարկում են.

ա) Անդրճանապարհին և հանրապետությունների ԺԿԽ-ներին՝ անմիջապես ձեռնարկել հանրապետական նշանակություն ունեցող բոլոր խճուղային ճանապարհների և կամուրջների նորոգմանը բամբակային շրջաններում, մինչև սեպտեմբերի 15-ը ավարտելու հաշվով։

ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ-ները պետք է հրատարակեն համապատասխան վորոշում, վոր պարտավորեցնե շրջգործկոմներին, մշակույթի աշխատանքներն ավարտելուն պես և մինչև բերքահավաքի կամպանիայի սկիզբը, աշխատանքային տուրքի և յերկտասնորյակի կազմակերպության միջոցով, նորոգել բոլոր հողային ճանապարհները, ինչպես նաև կամուրջներն ու նավամատույցները դընման կայանների և բամբակային գործարանների շրջաններում։

բ) Խորհտնտբամբակին՝ տասնորյակում Անդրճանապարհի հետ պայմանագիր կնքել խորհտնտեսությունների ներքին ճանապարհների կառուցման վերաբերյալ։ Ղարա-Զալայի, Միլի, Ալիզբեկովի, Ալազանի և Սարդարաբադի խորհտնտեսություններում այդ

աշխատանքներն ապահովել անհրաժեշտ միջոցներով այն գումարներից, որոնք նախատեսված են խորհտնտեսությունների շինարարության պլաններով:

Պարտավորեցնել Անդրճանտրանսին ավարտելու դեպի խորհտնտեսությունները տանող և խորհտնտեսությունների ներքին ճանապարհների կառուցումը, ինչպես նաև Աղջաբեդիի և Նաջաֆ – Ղուլի – Բեգլիի միջև ճանապարհի կառուցումը (14 կիլոմետր), վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 25-ը: Վերջինիս կառուցումը կատարել Աղրբեջանի ճանապարհների շինարարության վարկերի հաշվին:

գ) Անդրժողտնտխորհին և Անդրփայտթուղթտրեստին ապահովել փայտանյութերի հատկացումն Անդրճանտրանսի պահանջումներով՝ վերոհիշյալ ճանապարհները հերթից դուրս նորոգելու և կառուցելու նպատակով:

Անդրտրակտորկենտրոնին և կոլտնտեսական սիստեմին՝ կազմակերպել փոխադրության միջոցներ հում բամբակը դաշտերից դեպի ընդունող կետերը փոխադրելու համար և մասնակցություն ունենալ սայլատար տրանսպորտի կազմակերպման գործում՝ ընդունող կետերից բամբակը դեպի գործարանները փոխադրելու համար:

Անդրբամբակմիությանը՝ անմիջապես ձեռնարկել սայլատար տրանսպորտի կազմակերպման՝ բամբակային շրջանների կոլտնտեսությունների և անհատական գյուղացիական տնտեսությունների քարշի ուժի կոնտրակտացիայի միջոցով, ինչպես և միջոցներ ձեռք առնել վոչ բամբակային շրջաններից ազատ քարշի ուժը ներգրավելու նպատակով: Սեպտեմբ. 15-ից վոչ

ուշ բամբակային գործարաններին և գնման կայաններին կից կազմակերպել փոքր նորոգիչ արհեստանոցներ փոխադրության միջոցների ընթացիկ նորոգման համար: Անդրմատժողկոմատը, Անդրբամբակմիության պահանջումների համաձայն ապահովելու յե այդ արհեստանոցները տեսակավոր ու անիվային յերկաթի և փայտանյութերի անհրաժեշտ քանակով:

Անդրճանտրանսին՝ կազմակերպել ավտոշարքեր յեղած ու ստացվելիք ավտոմոբիլներից և առաջին հերթին ապահովել Ցեվչախ — Աղջաբեդի տրակտի սպասարկումը:

Անդրդեստրանսին — ապահովել տոննաժի անհրաժեշտ քանակությունը Քուռ գետի վրա՝ բամբակը և բամբակամթերման կամպանիայի հետ կապված մյուս բեռները անընդհատ և ժամանակին փոխադրելու համար: Միաժամանակ ապահովել նավահանգիստների և նավամատույցների ժամանակին նորոգումն ու կառուցումը Քուռի ափին, բամբակային բեռների ընդունելության և բեռնաթափության տեղերում:

Անդրյերկաթուղիների վարչությանը՝ ապահովել վագոնների անհրաժեշտ քանակության անընդհատ մատուցումը՝ բամբակային բեռները ժամանակին փոխադրելու համար:

Առաջարկել ԱՍՖՍՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ԺԿՄ-ներին ոգոստոսի 15-ից վոչ ուշ հրատարակել համապատասխան վորոշում՝ կուլակային – ունևոր տնտեսությունների փոխադրական միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու կարգի մասին՝ կարիքավոր տնտեսություններին, ինչպես կոլ-

6230-53

լեկտիվ, նույնպես և անհատական, տրանսպորտային ծառայությունն ցույց տալու համար։

Բամբակային շրջաններում և մանավանդ խորհտնտեսություններում ղեկավարվող փոխադրական միջոցների սուր պակասի նկատառումով, խնդրել ՀԿԿ (բ) Կենտկոմին և ՍՆՀՄ Հողժողկոմատի կոլեգիային՝ ապահովել բերքահավաքի կամպանիայի սկզբներին վոչ պակաս, քան 100 ավտոմեքենաների ներմուծումն Անդրկովկաս այն քանակից, վոր նախատեսված է բամբակահավաքի կամպանիայի ժամանակաշրջանում ներմուծել Միության բամբակային շրջանները։

Առաջարկել Անդրմատժողկոմատին հատկացնել կայուն գներով անհրաժեշտ քանակությամբ հացահատիկային կեր։ Հացահատիկային կերի անհրաժեշտ քանակության հաշվին առանձացնել 20·000 տոննա թեփ և 2·000 տոննա բամբակի քուսպ։ Անդրբամբակմիությունը տասնօրյակի ընթացքում իր պահանջումն և ներկայացնելու Մատակարարման Ժողկոմատին հացահատիկային կերի հարկավոր քանակության։

VII

Նշելով բամբակարուծների անբավարար մատակարարումը մշակման կամպանիայի ընթացքում, հացով և արդյունաբերական ապրանքներով, առաջարկել Անդրմատժողկոմատին և Հայմիության Անդրկովկասյան գրասենյակին՝ ապահովել բերքահավաքի կամպանիայի ժամանակաշրջանում հացի իրական ներմուծում բամբակային շրջանները՝ Անդրբամբակմիության ներկայացրած պլանի համեմատ այնպես, վոր մինչև սեպտեմբերի 15-ը ներմուծվի ամբողջ

կամպանիայի համար պահանջվող հացի քանակության կեսից վոչ պակաս (19·200 տոննա) և մինչև հոկտեմբերի 1-ը՝ մնացած քանակությունը — 19·200 տոննա։

Առաջարկել Անդրմատժողկոմատին և Անդրկոոպմիության՝ բամբակային շրջաններ փոխադրել հետևյալ արդյունաբերական ապրանքները.

Բամբակյա շորեղեն	9·466·000 ռ.
Շաքար	1·740·000 ռ.
Թեյ	548·000 ռ.
Բամբակի ձեթ	70·000 ռ.
Տնտեսական սապոն	225·000 ռ.
Կրկնակոշիկներ	957·000 ռ.
Կաշվե ապրանքներ	304·000 ռ.
Կոշիկներ	3·915·000 ռ.
Արդյուն. այլ ապրանքներ	5·123·000 ռ.
Ընդամենը	22·349·000 ռ.

Առաջարկել Անդրմատժողկոմատին և Անդրկոոպմիության՝ մեծագույն չափով ապահովել ներմուծվող ապրանքների տեսակների ընտրողականությունը՝ գյուղացիական բնակչության պահանջներին համապատասխան։ Ներմուծումը պետք է կատարվի անընդհատորեն՝ հում բամբակի հավաքի և գնման կայաններում յեղած մուտքի համեմատ։

Առաջարկել Անդրմատժողկոմատին, Անդրբամբակմիության, Անդրկոլտնտեսենտրոնին և Անդրկոոպմիության՝ տասնօրյակում ներկայացնել Անդրժողկոմխորհին ի հաստատություն բամբակարուծներին արդյունաբերական ապրանքներ մատակարարելու կարգն այն հաշվով, վոր շրջաններում ստացվելիք ար-

գյուղատնտեսական ապրանքները հասնեն սպառող-բամբակաբույժին անմիջականորեն:

VIII

Հաշվի առնելով հում բամբակի զտման աշխատանքի ընդարձակ ծավալը, և դրա հետ կապված՝ բամբակազտիչ գործարանների բեռնավորման աճը, մշակման վորակի վերաբերմամբ նրանց առաջադրվող բարձր պահանջներով հանդերձ, առաջարկել Անդրբամբակմիության՝ ապահովել բամբակազտիչ գործարանների մարտական պատրաստականությունը մինչև իրացման կամպանիայի սկիզբն և այդ ժամկետին ավարտել նորոգման, կառուցման և վերակառուցման աշխատանքները բոլոր բամբակազտիչ գործարաններում:

Բամբակազտիչ գործարանների արտադրական ծրագիրն աջողությամբ կատարելու նպատակով առաջարկել կուսակցական կազմակերպություններին՝ ուժեղացնել իրենց ուշադրությունն ու կուսղեկավարությունը գործարանների վերաբերմամբ: Պարտավորեցնել Անդրմատժողկոմատին և Անդրկոոպմիության ապահովել բամբակազտիչ գործարանների անընդհատ մատակարարումը: Պարտավորեցնել Անդրբամբակմիության ժամանակին բավարարել բոլոր գործարանները աշխատող ույժով, մանավանդ նրա վորակյալ մասով:

IX

Բամբակահավաքի պլանի կատարման, բամբակը ժամանակին հավաքելու և պետությանը հանձնելու գործի աջողությունը պահանջում է շրջանային և գյուղական կուսակազմակերպություններից, ինչպես նաև շրջգործկոմներից և գյուղխորհուրդներից աշխատանքի անմիջական վերակազմություն՝ իրենց աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները բամբակահավաքի կամպանիայի խնդիրներին համարեցնելու տեսակետից:

Բամբակային շրջանների կուսակցության շրջկոմները, վերակազմելով աշխատանքը, պետք է ապահովեն գյուղական կուսակազմակերպությունների և կոլտնտեսություններին, ՄՏ կայաններին, բամբակային խորհտնտեսություններին կից գտվող բջիջների կուսակցական կոնկրետ ղեկավարությունը: Գյուղական կուսակազմակերպությունների ամբողջ աշխատանքի ծանրության կենտրոնը, բամբակահավաքի ժամանակաշրջանում, պետք է տեղափոխվի անմիջական կերպով դաշտերի վրա և բամբակ հավաքողների վաշտերի (բրիգադների) ու խմբակների մեջ:

Կուսակցության շրջկոմներն ու գյուղական կուսակազմակերպությունները պետք է ապահովեն լայն մասսայական հասարակական – քաղաքական աշխատանք անհատական, բատրակ – չքավոր և միջակ տնտեսությունների մեջ, վճռականապես պայքարելով՝ բամբակահավաքի կամպանիային անհատական սեկտորը թերագնահատող տրամադրությունների դեմ: Քաղմասսայական ամբողջ աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները յենթարկելով բամբակահավաքի կամպանիայի արտադրական խնդիրներին, գոյություն ունեցող կոլտնտեսությունների ամրացմանը և կոլլեկտիվացման տեմպերի հետագա վերելքին՝ գյուղական կուսակազմակերպությունները պետք

և անողոք պայքար մղեն դեմոբիլիզացիոն տրամադրությունների ամեն տեսակ արտահայտումների դեմ, վորոնք հանդիսանում են բամբակահավաքի ու մթերման կամպանիայի թերագնահատման հետևանք:

ՀԿԿ (բ) Անդրյերկոմը և Անդրժողկոմխորհն առաջարկում են կուսակցության շրջկոմներին և շրջգործկոմներին՝ անցկացնել բոլոր շրջաններում բամբակահավաքի կամպանիայի հարցերին նվիրված բառարակա – չքավորական կոնֆերենցիաներ, կազմակերպել ՄՏ կայանների ագրոնոմիական հողամասերում կոլտնտեսությունների լայն կոնֆերենցիաներ, իսկ ՄՏ կայաններին կից՝ խորհուրդների հատուկ ժողովներ բամբակի հավաքի և մթերման հարցերի վերաբերյալ:

Անդրպրոֆխորհուրդն և հանրապետական պրոֆխորհուրդները՝ ՄՏ կայանների, բառարակների և հողագործական խորհտնտեսությունների հետ միասին՝ ակտիվ մասնակցություն են ցույց տալու բերքահավաքի կամպանիայի իրագործման, պատասխանատու աշխատավորներ կցորդելով բամբակային խորհտնտեսություններին, ՄՏ կայաններին և շրջաններին՝ տորբազաս պրոֆեսիոնալ կազմակերպություններին ոգնելու համար:

Կինո և ռադիո կազմակերպություններն առաջիկա ժամանակաշրջանում պետք է փոխեն իրենց գործունեությունը՝ բամբակի բերքահավաքի կամպանիայի, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների աշխատանքի կազմակերպման հարցերի ժողովրդականացման ուղղությամբ:

Անդրկոմկոմյան, հանրապետական և շրջանային բոլոր թերթերն անմիջապես լայն կամպանիա յեն սկսելու բամբակի հավաքի և մթերման հարցերի շուրջ, սիստեմատիկ կերպով լուսաբանելով այդ կամպանիայի ընթացքը: «Զարյա Վոստոկա»-ն սիստեմատիկ տեսություններ և զետեղելու՝ հանրապետական և շրջանային մամուլի բամբակահավաքի կամպանիային ունեցած մասնակցության մասին:

Բոլոր կազմակերպությունների բազմակողմանի պատրաստականությունը բամբակահավաքի և մթերման կամպանիային, կոլտնտեսների և չքավոր-միջակ գանգվածների արտադրական աճող վոգևորության ամենալրիվ ոգտագործումը՝ միաժամանակ վճռական պայքար մղելով կուլակի դիմադրության դեմ, կապահովեն բամբակամթերման կամպանիայի ամենահաջող յելքը, կտան նոր առաջխաղացումներ կոլեկտիվացման ընդհանրացման և կ'արագացնեն բամբակային շրջանների վերափոխումը համատարած կոլեկտիվացման շրջանների և այդ հիման վրա կվերացնեն կուլակությունը, իբրև դասակարգ:

Բարձրացնելով կոլտնտեսային և չքավոր-միջակ գանգվածների դասակարգային զգաստությունը, ել ավելի համախմբելով նրանց կուսակցության ղեկավարության ներքո՝ վճռական արշավ գործելու կուլակության դեմ, անողոք պայքար մղելով աջ և «ձախ» ոպորտունիստների — կուլակության գործակալության—դեմ, բամբակային շրջանների կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է ապահովեն 1931 թվի բամբակի բերքի հավաքի և մթերման

պլանների բոլշևիկորեն կատարումն ու գերակատարումը։

X

Առաջարկել Անդրկովկասյան Բանվորա – Գյուղացիական Տեսչության, ներկա վորոշման համեմատ, մինչև սեպտեմբերի 1–ը ստուգման յենթարկել բամբակային կազմակերպությունները՝ բերքահավաքի կամպանիայի պատրաստականության տեսակետից։

ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի նախագահ՝
X Մ. ՈՐԱԽԵԼԱՇՎԻԼԻ

ՀԿԿ (բ) Անդրյերկկոմի քարտուղար՝
Լ. ՔԱՐԹՎԵԼԻՇՎԻԼԻ

ՀՐԱՀԱՆԳ

1931 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Առաջիկա բամբակահավաքի և մթերման կամպանիան հանդիսանում է ԱՍՖԽՀ բամբակային շրջանների կուսակցական, խորհրդային – տնտեսական և կոլտնտես – կոոպերատիվ կազմակերպությունների վճռողական տնտեսա – քաղաքական խնդիրը։

Սոցիալիստական հատվածի խոշոր գերակշռումը բամբակագործական շրջաններում, բամբակացան մակարդակների աճը, հում բամբակի առաջիկա բերքի հսկայական աճը բացառիկ նշանակություն են տալիս բամբակի հավաքի ու մթերման կամպանիային, վորը պետք է տարվի ժողովրդական տնտեսության կարևորագույն խնդիրը վճռելու՝ Խորհրդային Միությանը արտասահմանի բամբակի կախումից ազատագրելու՝ նշանի տակ։

Բամբակամթերման կամպանիան ընթանալու է դասակարգային թշնամու կատաղի դիմադրության պայմաններում, վորն ամեն կերպ ճգնելու է վիժել հավաքի – մթերման պլանի կատարումը։

ՀԿԿ (բ) Անդրյերկկոմը և Անդրժողկոմխորհը հրավիրում են բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական և կոլտնտես – կոոպերատիվ կազմակերպությունների ուշադրությունը, վոր բերքահավաքի

աջող լուծումը կախված է կոլտնտեսական և անհատական չքավոր – միջակ գանգվածների լայն մոբիլիզացիայից՝ հում բամբակը հավաքելու և սահմանված ժամկետին պետությանը հանձնելու պլանը կատարելու և գերակատարելու շուրջ։

Բոլոր կուսակցական, խորհրդային կազմակերպությունները պետք է անմիջապես անցնեն աշխատանքի մարտական և հարվածային տեմպերի՝ բամբակահավաքի ու մթերման կամպանիայի նախապատրաստական ձեռնարկումները կիրառելու գործում լայն զարգացնելով աշխատանքի սոցիալիստական ձևերը կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում ու անհատական չքավոր – միջակ տնտեսություններում՝ մեծագույն չափով ոգտագործելով բոլոր ունեցած միջոցները։

Բամբակի առաջիկա հավաքի ու մթերման կամպանիայի առթիվ, կուսակցական, խորհրդային և կոլտնտես – կոոպերատիվ կազմակերպությունները պետք է անմիջապես լայն մասսայական բացատրական աշխատանք ծավալեն անհատականների բատրակ – չքավոր և միջակ գանգվածների շարքերում՝ կոլտնտեսությունների մեջ նրանց ներգրավելու համար, բոլշևիկորեն կապակցեն բերքահավաքի կամպանիայի պլանների կատարումն ու գերակատարումը գոյություն ունեցող կոլտնտեսությունների հետագա ամրացման, կոլտնտեսական շարժման նոր հզոր վերելքի կազմակերպման խնդիրների հետ «այն հաշվով, որ կոլեկտիվացումը հիմնականում ավարտվի 1932 թ.»։ (ՀԿԿ (բ) Կենտկոմի 1931 թ. ոգոստոսի 2–ի վորոշումը)։

(Քաղվածք ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի և ՀԿԿ (բ) Անդրյերկկոմի 1931 թվի ոգոստոսի 13–ի վորոշումից, տպված «Զարյա Վոստոկա»–յում, 13 ոգոստ. 1931 թ. № 221)։

II ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Բարձրացնել և ամրացնել աշխատանքի դիսցիպլինան։

Ընթացիկ տարվա բերքահավաքի կամպանիայի իրագործումն առանձնահատուկ լարված աշխատանք է պահանջում գնման կայանների և գործարանների բոլոր աշխատավորներից։

Հում բամբակի բերքի քանակության աճումն ու նրա ուժեղագույն վոխադրությունը դեպի գնման կայանները՝ մի կողմից, և բանույժի արդի պակասը՝ մյուս կողմից, պահանջում են գնման կայանի ու գործարանի յուրաքանչյուր ներկա բանվորից և ծառայողից աշխատանքի մեծագույն արդյունավետություն։

Այդ պայմաններում չի կարող տեղի ունենալ աշխատանքի դիսցիպլինայի վորևե թուլացում։ Յուրաքանչյուր աշխատող պետք է յուրացնե, վոր աննրելի գործալքությունը, անլուրջ վերաբերմունքը դեպի գործը, անհիմն բացակայությունն աշխատանքից և այլն — այդ բոլորը վոչ միայն կդանդաղեցնե աշխատանքը տվյալ գնման կայանում, այլ և կվնասեցնե բամբակի մթերման կարևորագույն կամպանիան, վոր տանում է պետությունը հասարակական բոլոր ույժերի հետ համախմբված։

Աշխատանքի սոցիալիստական ձևերը

Բերքահավաքի կամպանիան պետք է իրագործվի աշխատանքի սոցիալիստական ձևերի զարգացման և այդ ձևերի՝ յուրաքանչյուր գնման կայանի աշխատանքի մեջ՝ լայն կիրառման նշանաբանի տակ:

Սոցմրցակցությունը և հարվածայնությունը պետք է ապահովեն գյուղացիության բամբակը գնելու նախագծված պլանները:

Աշխատանքի չիտակությունն, պահանջվելիք առաջադրանքների կատարում ամենակարճ ժամկետին, հաշվետվության բարեկարգ վիճակ, տեղեկագրերի ժամանակին ուղարկում և այլն — բոլոր այդ մոմենտները պետք է դառնան յուրաքանչյուր գնման կայանում սոցմրցության և հարվածայնության առարկա: Աշխատանքի սոցիալիստական ձևերի կիրառման շնորհիվ ամեն մի սոցմրցակից աշխատավոր և հարվածային կնպաստե խոշորագույն խնդրի լուծման՝ կազմակերպված տանելու բերքահավաքի կամպանիան և ապահովելու հում բամբակի հավաքի պլանի կատարումը ու գերակատարումը: Գնման կայանում աշխատող հարվածայինն իրեն որինակով ցույց կտա հումույթ կրող գյուղացիներին աշխատանքի սոցիալիստական ձևերի առավելությունն և կդառնա սոցմրցակցության ու հարվածայնության գաղափարի զանգվածների մեջ լայն տարածման մասին կուսակցության տված դիրեկտիվների հաղորդիչը:

Սոցմրցությունն ու հարվածայնությունը պետք է իրագործվեն ոչ միայն գնման կայանների ներսը, այլ և առաձին գնման կայանների միջև:

Գնման կայանների և գործարանների հասարակությանն անհրաժեշտ է իսկույն և յեթ նախագծել և կիրառել ցուցանիշներ՝ բերքահավաքի կամպանիան լավ տանելու սոցմրցության իրագործման վերաբերյալ և ծավալել միջոցառումներ գնման կայանների աշխատավորներին սոցմրցությամբ ընդգրկելու ու նրանց մեջ հարվածայնություն զարգացնելու նպատակով:

Ընդհանուր միահամուռ ջանքերով, աշխատանքի սոցիալիստական ձևերի կազմակերպված ծավալումով, աշխատանքի կարգապահության ամրացումով և գնման կայանների բանվորների ու ծառայողների գիտակից վերաբերմունքով իրենց հանձնած գործին՝ կլուծվի այն խնդիրը, որ խորհրդային և կուսակցական մարմինները դրել են բամբակային կազմակերպության առաջ՝ բերքահավաքի կամպանիան անցկացնելու նկատմամբ:

Սոցմրցությունն ու հարվածայնությունն այդ խնդրի լուծման հիմնական մոմենտներն են հանդիսանում, վորովհետև սոցմրցությունն և հարվածայնությունը՝ աշխատանքը դարձնում են անարդ և ծանրը լուծ լինելուց քաջության, պատվի և հերոսության մի գործ (ընկ. Ստալինի խոսքերը):

III ԻՐԱՑՄԱՆ (ՌԵԱԼԻԶԱՑԻՈՆ) ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախապատրաստական միջոցառումներ

Կոոպերացիայի կողմից մեզ հանձնված մթերման — մատակարարման և հաշվեհարդարման ֆունկ-

ցիների անընդհատ և ամենահաջող իրագործումն կարելի է ապահովել միայն մեր ձեռնարկների պատշաճ պատրաստականությամբ այդ գործը կատարելու համար։ Գործարանի և գնման կայանի յուրաքանչյուր աշխատավոր ամենայն աշխատանքությամբ և ուշադրությամբ պետք է ստուգե այդ պատրաստականության աստիճանը, հայտնագործե թերություններն ու միջոցներ ձեռք առնե նրանք վերացնելու համար։

Մեր ձեռնարկների գործունեության այդ մասում անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրել հետևյալ առաջնակարգ հարցերի վրա.

1. Շրջանների բաժանել և յուրաքանչյուր կոլտնտեսություն ու դյուղ վորոշ գնման կայանին ամրացնել, յեղնելով ըստ այնմ վարչական շրջանի պատկանելության սկզբունքից, հաստատել այդ տեղական շրջգործկոմների կողմից և այդ մասին բացատրական կամպանիա մղել։

2. Միանգամայն կարգի բերել, պարզել և լիովին դրանցել կոոպերացիայից ընդունած բամբակ հանձնողների անձնական հաշիվները՝ 1931 թվականի կանխավճարների պարտքերի վերաբերյալ։

3. Բամբակի գնման առաջադրած պլանն՝ ըստ գործարանների և գնման կայանների՝ շարահյուսել առանձին գյուղերի և կոլտնտեսությունների միջև բաշխված պլանի հետ և նշանակել բամբակի հանձնման որացույցային ժամկետներ։

4. Լրացնել հաստատված չտատը։

5. Ստուգել տնտեսական գույքի (կշեռքների, բեռնատակերի, ծածկոցների, կողակալների) և հակահրդեհային գործիքների ներկայությունը, բաշխել

այդպիսիները գործարանների և գնման կայանների միջև ու հայտնագործել դրանցով ապահովված լինելու աստիճանը։

6. Ստուգել հակահրդեհային գործիքների ու պարագաների կացությունն և դրանց փորձի յենթարկել հայտնաբերելու համար՝ համապատասխանո՞ւմ են, արդյոք, դրանք իրենց կոչման։

7. Վերանորոգել, ստուգել և դրոշմել կշեռքները և հայտնաբերել դրանց պիտանիության աստիճանը չահագործման համար։

8. Ստուգել ծածկոցների (բրեզենտների), բարդանների (բամբակի հատուկ պարկերի), պարկերի և մյուս տնտեսական գույքի պիտանիության աստիճանը, ինչպես նաև կատարված նորոգման վորակը։

9. Մթերել բարդաններ և վորոշել նրանցով ապահովված լինելու աստիճանը, ինչպես բամբակաբույծների մատակարարման, նույնպես և հումությամբ գնման կայաններից գործարանները փոխադրելու չբրջանառության համար։

10. Կնքել պայմանագրեր կոլտնտեսությունների և մյուս տեղական տրանսպորտային կազմակերպությունների հետ՝ բեռների փոխադրության վերաբերյալ և ստուգել այդ կազմակերպությունների ապահովության աստիճանը փոխադրական միջոցներով։

11. Հայտնաբերել գործարանների և գնման կայանների ապահովության աստիճանը պահեստարաններով՝ հացը պահելու համար և ծածկարաններով՝ հումության ու ցանու սերմերի համար և դրանց համապատասխան ամրացումն իրենց հատուկ նպատակներին ծառայելու նկատմամբ։

12· Նախապատրաստել և ստորաբաժանել գործարանի տերիտորիան՝ ապրանքակույտեր դասելու, ըստ կարելվույն, նաև հրապարակներ չինելու համար:

13 Գնման կայաններին մատակարարել (մինչև սեպտեմբերի 1-ը) բավական քանակությամբ բարդաններ և բաժանել դրանք բամբակ հանձնողների միջև սահմանված նորմաներով (նախ քան հավաքի սկիզբը):

14· Կնքել պայմանագիր գյուղատնտեսական կոոպերացիայի հետ այն շրջաններում, որտեղ չկան բացվեն չարժական գնման կայաններ:

15· Նախապատրաստել բոլոր գնման կայանները հումույթի ընդունման համար, մինչև նրա հավաքի սկիզբը և հայտարարել բամբակագործ բնակչության՝ թե գնման կայանները պատրաստ են հումույթն ընդունելու:

16· Նախապատրաստվել ժամանակավոր բանվորներ ժողովելու գործին և կնքել նրանց հետ պայմանագրեր:

17· Ծանոթացնել աշխատակիցների չատին՝ շրջանների և ընդհանուր դիրեկտիվների ու բերքահավաքի կամպանիայի իրագործման պլանի հետ:

18· Ստուգել գործարանների և գնման կայանների չատի պատրաստականության աստիճանը, հրահանգել նրանց և ֆունկցիաների բաժանում կատարել բոլոր աշխատավորների միջև:

19· Լրացնել ձիաների և փոխադրական միջոցների հարկավոր քանակը:

20· Ստուգել ապահովության աստիճանը՝ վառելանյութով, անասուններով, բլանկներով, հաշվեգրքերով, թղթով, գրասենյակային պիտույքներով և այլն:

IV· ՀՈՒՄ ԲԱՄԲԱԿԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ԶՏՄԱՆ, ՊԱՀԵՍՏԻ ՅԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Բամբակ – հումույթի հանձնման կարգը:

Բամբակաբույծների հարմարության և գնման կայաններից նրանց ավելի շուտ արձակելու համար, ինչպես նաև բամբակի հանձնման ժամկետները կարգավորելու նպատակով սահմանվում է առանձին գյուղերի և կոլտնտեսությունների համար բամբակը հանձնելու հերթապահության կարգ:

Ցուրաքանչյուր գործարան և գնման կայան բամբակի իրացման կազմած պլանի հիման վրա և հաշվի առնելով աշխատավորների առյերես չտատն և ժամանակի լիակատար ոգտագործումը, որի ընթացքում հնարավոր է կատարել բամբակի ընդունման ոպերացիաներ, անկախ բանվորական որվա սահմանված տևողությունից, որոշում են բամբակաբույծների ամենաչատ քանակությունը, որ գործարանը կամ գնման կայանը կարող է բաց թողնել, և բամբակի այն քանակությունը, որ կարող է ընդունել:

Որոշելով ընդունող կետի սպասարկման ընդունակությունը, գնման կայանները՝ գործարանի վարչության և տեղական իշխանության ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ միասին՝ որոշում են որերը, յերբ այս կամ այն գյուղ կամ կոլտնտեսություն բամբակ են հանձնելու, ըստ այնմ, յեթե կան խոշոր գյուղեր, ապա դրանց համար սահմանվում են յերկու կամ ավելի որ իրար հետևից: Փոքրիկ գյուղերը կարող են միանալ յերկու-յերկու, կամ ավելի, մի որում՝ բամբակաբույծ-

ների քանակության և գնման կայանի շրջանառության ընդունակության համեմատ:

Ըստ գյուղերի բամբակ հանձնելու հերթականություն սահմանելիս անհրաժեշտ է մտցնել այնպիսի կարգ, որպեսզի յուրաքանչյուր գյուղ հնարավորություն ունենա ամսվա ընթացքում կատարել վոչ պակաս 5—6 հանձնություն, իսկ կայանի բեռնավորումը բամբակաբույծներով բաշխելու ժամանակ՝ անհրաժեշտ է ի նկատի ունենալ, վոր բամբակաբույծների վոչ բոլոր քանակությունն է ներկայանում նշանակված որին և ուստի պետք է վերցնել վորոշ պաշար բացակայության համար. համենայն դեպս, անհրաժեշտ է, վոր հանձնելու հերթականության կարգը վոչ մի դեպքում չդանդաղեցնե բամբակի իրացման արագ ընթացքը:

Բամբակ հանձնելու ժամկետների մասին յուրաքանչյուր գյուղ պետք է նախորոք իրազեկ լինի ամենայն մանրամասնությամբ:

Մոչոր կոլտնտեսությունների համար, յեթե նրանց հումույթի հանձնումը կարող է տևել մի ամբողջ բանվորական որ, անհրաժեշտ է նշանակել հանձնության առանձին որեր:

Բեռնակրության վերահսկումն

Բամբակի բեռնակրման վերահսկողությունն իրագործելու համար սահմանվում են մուտքի տոմսեր (ներմուծման նշաններ): Կառամուտ դռների մոտ պահապանը (կամ միլիցիոները) համարում է բամբակաբույծների բերած բամբակի բարդանները և մուտքի տոմսի (ներմուծման նշանի) վրա նշանակում նրանց քանակը. առանց մուտքի տոմսի բամբակը ներս չէ թողնվում կայան, իսկ ընկալողը՝ դեռ ընդունելությունը չսկսած՝ պահանջում է բամբակաբույծից ներկայացնել մուտքի տոմս և առանց դրան ընդունելություն չէ կատարում:

Մուտքի տոմսի (ներմուծման նշանի) և ընդունելության ստացականի մեջ ցույց տված ընդունված բամբակի բարդանների քանակությունը պետք է լինի միևնույն: Մուտքի տոմսը պարտադիր է կցել ընդունելության ստացականին: Հաշվարկու սեղանը չէ հարգարում հաշիվներն ընդունելության ստացականի հիման վրա, յեթե նրան չի կցված մուտքի տոմս:

Հաշվարկու սեղանը պարտավոր է համեմատել, համապատասխանո՞ւմ է, արդյոք, մուտքի տոմսի մեջ ցույց տված բամբակի բարդանների քանակությունն ընդունելության ստացականի մեջ ցույց տված քանակության, և տարաձայնության դեպքում հայտնել այդ մասին գործարանի տեսչին կամ նրա փոխանորդին, իսկ գնման կայաններում — գնման կայանի վերակացուին:

Հասարակական վերահսկողություն

Բամբակը կշեռքների վրա քաշելու ժամանակ պարտադիր է սահմանել վերահսկողություն ընդունողի գործողությունների վրա՝ մի անձի միջոցով, վոր նշանակվում է գործարանի տեսչի կամ գնման կայանի վերակացուի կողմից, կամ թե, դրա բացակայության դեպքում, հենց իրենց, բամբակաբույծների միջից նշանակված, դրագետ և կշեռքին ծանոթ մի գյուղացու միջոցով:

Վերահսկողությունը հետևում է բամբակն ուղիղ կշռելուն, հսկում է նրա տեսակների վորոշման, ինչպես նաև ընկալողի հետ միասին բացատրություններ է տալիս բամբակաբույծներին՝ բամբակը հանձնելու ժամանակ ծագող հարցերի մասին:

Այն դեպքում, յերբ վերահսկողության համար նշանակված բամբակաբույծն անկարող է ամբողջ բանվորական որ մնալ կշեռքի մոտ, նրա տեղն առաջ է քաշվում ուրիշ բամբակաբույծ:

Մի ենթուն կարգով կազմակերպվում է հասարակական վերահսկողություն՝ հաշիվների հարդարման և բամբակագործներին հասանելիք դրամական վճարումների վերաբերմամբ:

Կշեռքների ստուգումը

Կշեռքի աշխատանքի սխալության և, դրա հետ կապված, հումույթի սխալ քաշի դեպքերի առաջն առնելու նպատակով՝ ամեն որ, հումույթի կշիռը դեռ չըսկսած, կշեռքը ստուգման է յենթարկվում ստուգիչ կշռաքարերով և կարգի յե բերվում՝ քաշը ճիշտ ցույց տալու համար:

Կշեռքն անպայման պետք է տեղավորված լինի փայտե շրջանակների մեջ: Կշեռքը բակի մյուս մասերը տեղափոխելու անհրաժեշտության դեպքի համար պետք է ունենալ շրջանակների վորոշ պաշար:

Կշեռքի ստուգումը կատարում է հումույթ ընդունողն՝ անպատճառ գործարանի տեսչի կամ գլխման կայանի վերակացուի կողմից նշանակված անձի ներկայությամբ. ցանկալի յե, վոր այդտեղ ներկա լինի նաև բամբակ հանձնելու համար յեկած բամբակաբույծների ներկայացուցիչը: Կշեռքի տեղի ունեցած ստուգման մասին գրություն է կատարվում հատուկ կշեռքի ստուգումների համար նշանակված գրքույկի մեջ և այդ գրությունը հաստատվում է ստուգման բոլոր մասնակիցների ստորագրությամբ:

Հումույթի ընդունելությունը

Կոլտնտեսություններից և անհատականներից հումույթ ընդունելու ժամանակ անհրաժեշտ է՝

ա) հետևել և հարկավոր դեպքում բամբակաբույծների ուշադրությունը դարձնել, վորպեսզի, հում բամբակը փոխադրելու ժամանակ, սայլերի բեռնաբարձն այնպես կատարվի, վոր բարդանների գլուխները դարձրած լինեն սայլի ներսը, չկախվեն սայլից և խնամքով կարված լինեն.

բ) հումույթը կշռելիս պետք է սայլի մոտ թափված բոլոր բամբակն անմիջապես հավաքել, ըստ այնմ, յեթե թափածոն ցամաք է և մաքուր, նա պետք է կշռվի հանձնվող հումույթի հետ միասին. հակառակ դեպքում նա կշռվում է առանձին և պահվում է նույնպես առանձին.

գ) ընդունողը բարդանները բաց անելիս՝ հումույթի վորակը ստուգելու համար, պետք է բարդանը կտրե կարի վրայով այնպես հաշված, վոր կտրվածքը լինի բարդանի միջին մասում և ունենա նմուշը հանելու համար անհրաժեշտ մեծություն. տեսակը վորոշելուց հետո, պետք է իսկույն և եթ նմուշը մտցնել բարդանի մեջ, թույլ չտալով վոր հումույթը թափթփվի.

դ) Մինչև ընդունելության սկիզբը, այն վայրը, որտեղ կատարվելու է ընդունելություն, պետք է խնամքով մաքրվի և ծածկվի յերրորդ կատեգորիայի հին բարդաններով, նախապես իրար կարած մեծ չափսավի (կամ շալի) նման:

) Կշեռքի մոտ թափված բոլոր հումությունը պետք է խկուն և յեթ հավաքվի՝ չթողնելով հումության կուտակում, սակայն, թափածոն, որպես կանոն, միևնույն կույտի վրա չի դրվում, այլ պահվում է առանձին, որպես ավելի աղտոտ ու կեղտոտ:

Տեսակավորումը, բամբակաբույծների հետ հաշիվ տեսնելու պայմանները և հում բամբակի գինը

Անդրժողկոմխորհի բամբակաբույծների հետ հաշիվ տեսնելու համար հաստատած 1931 թ. բերքի հումության տեսակավորումը՝ յերեք տեսակների սահմաններում, պետք է համարել որպես առաջարկություն հում բամբակի յերեք հավաքի կատարման և բամբակաբույծների հետ նրա հաշիվները դյուրացնելու համար, այլ ոչ թե որպես վերացում առաջ գոյություն ունեցող տեսակավորման:

Ի կատարումն ԽՍՀ Միության ԺՏԲԽ-ի և Հողժողկոմատի տված ցուցմունքների՝ բամբակի մանրաթելին տեսակավորման անհրաժեշտության մասին՝ ըստ արդյունաբերական տեսակների և դասերի, ինչպես նաև լավագույն ցանքային նյութի հատկացումն առավելապես ապահովելու նպատակով, անհրաժեշտ է, որ բամբակացանները հում բամբակի բոլոր հավաքների ժամանակ անպատճառ հետևեն, որպեսզի հումությունը լինի՝

1) միևնույն տեսակի սերմի և չրջանի,

2) հավասարաչափ աստիճանի հասունության,

3) միատեսակ աղտոտության (առանց աղբի, կեղտի ու բների),

4) բնական (նորմալ) խոնավության:

Հաշվարկությունը բամբակաբույծների հետ հում բամբակի համար կատարվում է հետևյալ գներով.

1931 թ. հաշվարկման համար սահմանված տեսակները	ԳԻՆԸ		ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀՈՒՄ ԲԱՄԲԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԻՆ	
	Կիլոգրամ. (կոպեկ.)	Փութի (ռ. և կ.)	ՍՍՀՄ ԺԳԽ և Հող.-ԺԿ 1931 թ. համար հաստատվ. արդյունաբերական տեսակ.	Առաջ գոյություն ունեցող տեսակավորման
1 տեսակ (հավաք)	31 2	5,11	I և II	I տես. ընտիր, նորմալ աղտոտ. և միևնույն I տես. նորմալ
2 » »	29,0	4,75	III	Միջանկյալ նորմալ
3 » »	26,7	4,37	IV և V	2, 3 տես. նորմալ
Կտորանք »	25,0	4,10	Առանց տեսակավ.	Առանց տեսակավ.

1931 թվի համար Անդրժողկոմխորհը հաստատել է տեսակների հետևյալ պլանային հարաբերականությունը.

1-ին տեսակը 78 տոկոս (1 տեսակ և միևնույն 1 տեսակ)
2-րդ » 12 » (միջանկյալ)
3-րդ » 10 » (2 և 3 տեսակ)

Հումույթի հավաքի ժամկետները

Հում բամբակի հավաքի և մթերման համար սահմանված են ժամկետներ՝

Սեպտեմբերին 3 տոկոս
Հոկտեմբերին 45 »
Նոյեմբերին 45 »
և դեկտեմբերի առաջին կիսին 7 տոկոս

այնպես, որ մթերադործման ամբողջ կամպանիան պետք է վերջացվի 1931 թվի դեկտեմբերի 15-ից վոչ ուշ:

Բեռնակրություն 10 կիլոմետրից հեռու

Այն բամբակաբույծները, վորոնց ցանքերը գտնվում են բամբակադործարանից կամ գնման կայանից 10 կիլոմետրից ավելի հեռավորության վրա, ստանում են 10 կիլոմետրից ավել տարածության համար առանձին բեռնակրության վարձ՝ 30-ական կոպեկ յուրաքանչյուր տոննա – կիլոմետրից:

Ծանոթություն. — Ունևոր և կուլակային տնտեսություններին, 10 կիլոմետրից ավել տարածության համար վոչինչ չի վճարվում:

Բամբակի տեսակների խառնուրդ

Այն դեպքում, յերբ մի բարդանի մեջ իրար են խառնված բամբակի յերկու կամ ավելի զանազան տեսակներ, բամբակն ընդունվում է բարդանի մեջ յերևան հանված տեսակներից ամենաստորինի հաշվով:

Տարաձայնություն տեսակների վորոշման առթիվ

Այն դեպքում, յերբ բամբակի տեսակների վորոշման առթիվ ծագում է տարաձայնություն գործարանի կամ գնման կայանի վարչության միջև՝ մի կողմից և բամբակաբույծների՝ մյուս կողմից, տեսակի հարցը վճռում է իրավախոհ (արբիտրաժ) հանձնաժողովը, բաղկացած՝ 1) տեղական գործկոմի ներկայացուցչից (Շրջհողբաժին), 2) գործարանի կամ գնման կայանի ներկայացուցչից, 3) մեքենա – տրակտորային կայանի ներկայացուցչից և 4) Շրջկոլտնտմիությունից:

Տեսակը վորոշելիս բամբակ ընդունողները, ինչպես նաև իրավախոհ հանձնաժողովները առաջնորդվում են հումույթի համար սահմանված հատկանիշներով:

Եթե տեղական իրավախոհ հանձնաժողովում համաձայնության չհանգեն, ապա հումույթի վիճելի մասից, կողմերի ներկայությամբ վերցվում է միջին նմուշ 2 կիլոգրամի չափ, ամուր փաթաթվում է թղթով և ապա քաթանով, կարվում է ու փակցվում կնիքով: Փակցրած նմուշն ուղարկվում է Անդրբամբակտրեստի (Զակխլոպտրեստի) հասցեին, իսկ նույն նմուշի զուգը մնում է տեղում: Անդրբամբակտրեստում ստացված վիճելի որինակն առանձին սենյակում զննության է յենթարկվում իրավախոհ հանձնաժողովի կողմից, բաղկացած՝ 1) Անդրհողժողկոմատի ներկայացուցչից (նախագահ), 2) Անդրբամբակկենտրոնի ներկայացուցչից և 3) Անդրբամբակտրեստի ներկայացուցչից: Հանձնաժողովի վճիռը համարվում է

վերջնական և պարտադիր կողմերի համար և այդպիսին պետք է հայտարարվի գործարանին տասնորյակի ընթացքում նմուշի ստացած օրից։

Արդյունաբերական յենթատեսակավորում

Ընդունելով բամբակաբույծներից բերված հում բամբակը, ընդունողները միաժամանակ տեսակավորում են այն արդյունաբերական տեսակների համեմատ. I-ին, II-րդ, III-րդ, IV-րդ և V-րդ տեսակներ, ու կտորանք (հումույթ՝ չբացված պատյաններից դուրս հանած)։

I ՏԵՍԱԿ։ Հում բամբակ՝ բոլորովին հասուն, միանգամայն զարգացած, առողջ տեսքով, կենսական փայլով, սպիտակ, առանձին շրջաններին հատուկ նշույլներով, առանց անձրևի և սառնամանիքի ազդեցության հետքերի, չոչափով պինդ և մետաքսային, չոր։

ա) Ընտիր դաս։ Անաղտ, յերբեմն պատահում են խոշոր տերևներ, միանգամայն չոր (առանց ճյուղերի, հողի և այլն)։

բ) Նորմալ դաս։ Թեթևակի աղտոտ, միջին մեծության տերևներով՝ զտման ժամանակ հեշտությամբ բաժանվող, չոր (առանց ճյուղերի, հողի, ավազի և այլն)։

գ) Աղտոտ դաս։ Թեթևակի աղտոտ միջին և մանր կպչուն տերևներով՝ զտման ժամանակ վոչ բոլորովին բաժանվող, (առանց ճյուղերի, հողի, ավազի և այլն և վոչ բավական չոր)։

II ՏԵՍԱԿ։ (Նախկին տեսակավորման համեմատ՝ մինուս I տեսակ)։ Հում բամբակ՝ քիչ նվազ հասուն, քան I տեսակը, միանգամայն զարգացած, փայլով քիչ խավար, սպիտակ, առանձին շրջաններին հատուկ նշույլներով, անձրևի թեթև դեղին հետքերով, չոչափով պինդ, նվազ մետաքսային, քան I տեսակը, բնական խոնավության։

Նորմալ դաս։ (Տես I տեսակը)։

III ՏԵՍԱԿ։ (Նախկին տեսակավորման համեմատ միջանկյալ տեսակ)։ Հում բամբակ՝ վոչ բոլորովին հասուն, դույնը բաց-դեղին, անձրևի և սառնամանիքի թեթև հետքերով, համարյա առանց փայլի, չոչափով միջին մետաքսայնության ու պինդության, բնական խոնավության։

Նորմալ դաս։ (Տես I տեսակ)։

IV ՏԵՍԱԿ։ (Նախկին տեսակավորման համեմատ II տեսակ)։ Հում բամբակ՝ մեծ չափով ահաս, թերի զարգացած թելերով, դեղնագույն, մուգ-դեղին բիծերով, առանց փայլի, համարյա խավար. չոչափով քիչ թույլ, բնական խոնավության։

Նորմալ դաս։ (Տես I տեսակ)։

V ՏԵՍԱԿ։ (Նախկին տեսակավորման համեմատ III տեսակ)։ Հում բամբակ՝ տհաս, չզարգացած թելերով, դույնը մուգ-դեղին, խավար, չոչափով թույլ, բնական խոնավության։

Նորմալ դաս։ (Տես I տեսակ)։

VI ՏԵՍԱԿ։ Հում բամբակ՝ դուրս հանած չբացված պատյաններից։

Խոնավ հումույթ

Հում բամբակն ավելի բարձր խոնավությամբ, քան սովորաբար ընդունված է, և վորն յերկար պահե-

լու դեպքում կարող է տաքանալ, չի ընդունվում և վերադարձվում է բամբակաբույծին չորացնելու համար: Թյուրիմացություններից խուսափելու համար, սեզոնը դեռ չսկսված, բոլոր բամբակաբույծներին (ինչպես անհատական, նույնպես և կոլեկտիվական) հայտարարվում է, որ խոնավ բամբակը չի ընդունվելու:

Բացառիկ դեպքերում, յերբ բամբակը փոխադրելու ժամանակ բարդանները թրջված լինեն վերին խավերում, խոնավությունը խորքերն անցած չ'լինի և հետագա պահեստի համար այդ բամբակը վտանգ չե սպառնում, նրան կարելի յե ընդունել՝ կատարելով համապատասխան զեղչ կշռից խոնավության համեմատ և նշանակելով այդ ստացականի մեջ:

Խոնավության զեղչի չափը պարտադիր է որոշել բամբակ հանձնողի համաձայնությամբ. համաձայնության բացակայության դեպքում, բամբակը վերադարձվում է չորացնելու համար:

Խոնավության և աղտոտության զեղչ

Այն դեպքում, յերբ բամբակաբույծը հանձնում է բամբակ, սահմանված նորմաներից ավելի խոնավություն և աղտոտություն պարունակող, պետք է գները զեղչել յերեք (3) կոպեկի սահմաններում կիլոգրամից:

Խոնավությունը որոշելու ժամանակ այն դեպքերում, յերբ բացակայում են դրա համար հարկավոր միջոցներն ու այդ հարցին ավելի ճիշտ և հիմնավորապես մոտենալու հարմարությունները,

պետք է առաջնորդվել ընդունողների ունեցած փորձառությամբ և որոշել խոնավությունը շոշափելով, իսկ վիճելի դեպքերում վեճերը պետք է լուծվեն իրավասու հանձնաժողովի կողմից:

Զեղչ ապրայի (տառայի) համար

Ապրայի զեղչը կատարվում է հում բամբակի ընդունելու ժամանակ որոշված ընդհանուր (բրուտտո) կշռից, հանձնված բարդանների քանակության համեմատ՝ հաշվելով մեկ ամբողջ և յերեք տասերորդական կիլոգրամ (1,3 կիլոգր.) յուրաքանչյուր սովորական քաթանյա բարդանի համար:

Այն ժամանակ, յերբ հում բամբակը կրվում են բրդյա կամ ուրիշ վոչ հատկանմուշ պարկերով, ապրայի զեղչը կատարվում է նրանց խսկական քաշի վորոշման միջոցով՝ հումությունն այդ պատկերից դուրս թափելուց հետո:

Հում բամբակի փոխադրության կարգը:

Վորպեսզի հումությունը փոխադրությունների ժամանակ շատ թափ չըգա ու քաշը շատ չըպակասի առաջարկվում է՝

ա) Հումությունն ուղարկել բացառապես լավ կարված բարդաններով, վորոնք միանգամայն ապահովում են բամբակի լիակատար պահպանումը թափթփվելուց:

բ) Բարդանների բարձը սայլերի վրա կատարել այնպես, վոր նրանց գլուխներն անպատճառ ուղղված լինեն դեպի սայլերը, միաժամանակ ուշադրություն դարձնելով, վոր ճանապարհին սայլի անիվները չը վնասեն բարդանները:

գ) Այն հումույթը, որը ուղարկվում է ուղտերով, պետք է ածված լինի լավ բարդանների մեջ և գլուխները դեպի վեր դրված, որպեսզի ուղտերը չկարողանան բամբակն ուտել: Յուրաքանչյուր ուղտի գլխին հագցնել բերնակալներ: Անհրաժեշտ է նախազգուշացնել բեռնատարներին՝ ճանապարհին հետևել, որպեսզի յեղներն ու ուղտերը չընչացնեն բարդանները. հումույթի քաշի պակասության և ապրայի վնասի համար նրանք պատասխանատվություն են կրում:

դ) Գործարան կամ գնման կայան բերված հում բամբակը պետք է ընդունել առանց հապաղումների: Ըստ այնմ, բարդանները սայլերի կամ ուղտերի վրայից մատուցանում են բեռնակիր բանվորներին հենց իրենք սայլապանները կամ ուղտապանները:

ղ) Հումույթն յերկաթուղային կայարաններին հանձնելիս նրա հետագա փոխադրության համար դեպի գործարաններն անհրաժեշտ՝ է պահանջել յերկաթուղային վարչությունից՝ տրամադրել բեռնատակեր հումույթը, մինչև ուղարկելը, վրան դրսելու համար և ապահովել ծածկոցների (բրեզենտների) հարկավոր քանակությամբ բամբակ անձրևից պահպանելու համար:

ե) Կտրականապես արգելվում է հումույթը վագոններ բարձող բանվորներին գործ ածել կարթեր:

ը) Հումույթի բարձի համար մատակարարվող վագոնները պետք է լինեն խնամքով մաքրված:

թ) Բարդանները, մինչև բարձը, պետք է մանրակրկիտ կերպով զննվեն և յեթե յերեվան հանվեն գլուխներից կամ կողքերից քանդված կամ պատռված

բարդաններ, այդպիսիները պետք է անմիջապես կարվեն:

ժ) Բարձի ժամանակ թափված բամբակը անհրաժեշտ է հավաքել, թույլ չտալով կողմնակի առարկաների խառնուրդ, լցնել առանձին պարկեր և դասել պլատֆորմի վրա կամ վագոնի մեջ, մակագրելով պարկերի վրա՝ «թափած»:

ի) Բարդանները պլատֆորմի վրա բարձելիս անհրաժեշտ է հետևել, որ նրանց դասավորումը կատարվի՝ գլուխները դեպի պլատֆորմի ներսը ուղղված դրությամբ:

լ) Պլատֆորմի վրա բարձած հումույթը պետք է լավ կապվի, որպեսզի ճանապարհ դնալիս առանձին բարդանների կորուստը լինի անհնարին:

խ) Յերկաթուղով յեկած հումույթի բեռնաթափի ժամանակ, այդպիսին, գործարանի վարչության ցուցմունքով, պետք է դասել նույնպես բեռնատակերի վրա կամ հատուկ պատրաստված տեղ, թույլ չտալով, որ բարդանները վերևից վայր գցվեն: Բոլոր թափածոն, ինչպես վագոնում մնացած, նույնպես և բեռնաթափի տեղը, պետք է խնամքով հավաքվի առանց ոտար առարկաների խառնուրդի:

ծ) Գնման կայանները, որպես կանոն, բոլոր ընդունած հումույթը, փոխադրության առաջադրած պայմանների համաձայն, ուղարկում են գործարաններ, աշխատելով ապրանքի կուտակում առաջ չ'բերել: Սակայն, յեթե գործարանում ամբարվում է մեծ քանակությամբ հումույթ, ապա գործարանի ցուցմունքով գնման կայանը պարտավոր է պահել I և II

տեսակի բամբակը իրեն մոտ այն քանակությամբ, վոր կարող է տեղավորել ծածկարանի տակ. ավելորդն իսկույն և յեթ ուղարկվում է գործարան:

4) Ստորին տեսակների հում բամբակը, ինչպես բնականից ավելի խոնավ, պետք ուղարկվի գործարան անմիջապես:

Բամբակը գնման կետերից ուղարկելիս կազմվում է ապրանքագիր (ֆակտուրա)՝ յուրաքանչյուր բարդանի քաշի և արդյունաբերական տեսակի նշումով. բամբակի բարդանի վրա նշանակվում է համարը, վորով տվյալ բարդանը գրված է ապրանքագրի մեջ, և նրա կշիռը:

Նշանագրություն (մարկիրովկա) հարմարության համար բարդանի վրա գրվում է նրա համարը ըստ կարգի վորպես համարիչ իսկ քաշը վորպես հայտարար. այդպես որինակ՝ Բարդանը գրվում է ապրանքագրի 23 համարով և կշիռը 88 կիլոգրամմ է. այդ դեպքում գրվում է $^{23}/_{88}$: Գնման կայաններից ուղարկվող բամբակի բարդանների վրա համարի, քաշի և տեսակի նշանագրումն անհրաժեշտ է ինչպես տայլատար, նույնպես և ջրադնաց ու յերկաթուղային փոխադրության ժամանակ:

Ապրանքագրերի կազմումն ու դրանց վերադարձը գործարաններին:

Փոխադրվող բամբակի ապրանքագրերը գնման կայանը կազմում է 3 որինակ, վորոնցից 2-ը ուղարկվում է գործարանին, իսկ մեկը (արմատը) մնում է գնման կայանում: Գործարանն ապրանքն ընդունելուն պես իսկույն վերադարձնում է ապրաքագիրը գնման կայանին՝ նշանակելով թե վորքան պարկ ստացվեց, կշիռն ինչքան դուրս յեկավ և ինչ տեսակի յեր բամբակը: Բամբակի արդյունաբերական յուրաքանչյուր տեսակի համար կազմվում են առանձին ապրանքագրեր:

Միջոցներ հումոյթի ջեռացման դեմ

Կույտերի մեջ և ծածկարանների տակ պահվող հումոյթի ջեռացման, նրա կշռի ճշտության, բարդանների քանակի և հումոյթի կանոնավոր տեսակավորման պատասխանատվությունը գործարանի վարչությունն ու գնման կայանները դնում են ընդունողների վրա: Կույտերը ջեռացումից պահպանելու համար ընդունողը պարտավոր է ամեն որ շրջել կույտերն և նայել նրանց. ամեն գործարանում և գնման կայանում պետք է լինեն յերկաթյա չոչափելիներ, վորոնց միջոցով իմացվում է հումոյթի ջեռացումը:

Նկատի ունենալով, վոր հում բամբակի պահեստը միանգամայն բարեկարգ վիճակի մեջ չափազանց կարևոր նշանակություն ունի, գործարանների վարչություններն և գնման կայանների վերակացուները պետք է առանձնապես ուշադիր վերաբերվեն այդ հարցին և ունենան անդուլ հսկողություն բամբակի պահպանության վերաբերյալ: Գործարանավարչության և գնման կայանների կողմից ընդունողների վրա դրված՝ հումոյթը կույտերում և ծածկարանների տակ հսկելու պատասխանատվությունից անկախ՝ գործարանների տեսուչները կամ նրանց փոխանորդները, իսկ գնման կայաններում՝ դրանց վերակացուները պար-

տավոր են շաբաթը 2–3 անգամ անձամբ նայել և ստուգել չե՞ ջեռանում, արդյոք, բամբակը, և հատուկ գրքերի մեջ հուշագրել այդ: Ջեռացում հայտնաբերելու դեպքում անմիջապես ձեռնարկել միջոցներ վտանգման առաջն առնելու համար՝ հումույթը շուտափույթ փոխադրելով և նրան դիշեր – ցերեկ անընդհատ թիադարձի յենթարկելով, կանգ չառնելով պահանջվելիք ծախսերի դիմաց: Այն հումույթը, որ սկսել է արդեն ջեռանալ, պետք է անմիջապես յենթարկել զտման:

Գործարաններում և գնման կայաններում անհրաժեշտ է ունենալ հատուկ գիրք հումույթի և ուրիշ մթերքների (սերմերի, հացամթերքի, պարարտանյութերի և այլն) պահեստի վիճակի ստուգման և հաշվառքի համար: Ընդունողներն իրենց ամենօրյա նկատողություններն, ինչպես հումույթի, նույնպես և մյուս ապրանքների պահեստի վիճակի մասին, կատարում են հենց այդ հիշյալ գրքում:

Հումույթի պահեստը

Բամբակաբույծներից գործարանում ընդունած հում բամբակն խսկույն և յեթ դատարկվում է բարդաններից:

Ինչպես կանոն, գործարաններում բոլոր հումույթը պահվում է թափածո վիճակի մեջ. առաջին հերթին ամբողջովին լցվում են ծածկարաններն ու չոեմարանները. յեթե բոլոր հումույթը ծածկարանների տակ տեղավորելու հնարավորություն չկա, թույլ է տրվում պահել բացոդյա թափածո կույտերով:

Կույտերի դասելու կարգի և չափի մասին կ՚որոշվի առանձին հրահանգ:

Զգուշության միջոցներ կույտերը դասելիս

Կույտերը պետք է դասել չոր ժամանակ և չոր հումույթից: Ջեռացման գլխավոր պատճառը հանդիսանում է հումույթի խոնավությունն, ըստ այնմ հումույթի մի վորևե մասում սկսված փտումն ասիճանաբար տարածվում է՝. վարակելով և փչացնելով նաև այն հումույթը, վոր ընդունվել եր չոր վիճակում: Ուստի անհրաժեշտ է առանձնապես խստիվ հսկել, վոր բամբակաբույծներից հումույթը ստացվի չոր վիճակում, վոր հումույթը խոնավ յեղանակին ընդունելու ժամանակ բանվորները ման չգան հումույթի վրա թաց և ցեխոտ վոտներով և վորպեսզի բացոդի տակ թափված հումույթի կիսատ կույտերը ծածկվեն բրեզենտներով:

Ստորին տեսակների հումույթը պետք է անպատճառ թափվի փակ տեղ և նրան անհրաժեշտ է յենթարկել զտման առաջին հերթին:

V ԲԱՐԴԱՆՆԵՐ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Բարդաններ բաց թողնելու նորման

Անգրժողկոմխորհի վորոշման հիման վրա (հրատարակված է «Զարյա Վոստոկայում», առ. 13/VIII ամ. 31 թ. №221) բամբակ հանձնողներին բարդաններ մատակարարելու նորման սահմանված է 3-ական հատ մեկ տոնն հումույթի համար, յենելով բամբակի բերքատվությունից և հաշվելով վոր յու-

բաքանչյուր բարդան կատարելու յե չորս շրջանառություն:

Բարդանների մատակարարման սիստեմը

Բարդանների մատակարարումը բամբակաբուծներին նրանց վաճառքի միջոցով ի սեփականություն վերացվում է: Անդրժողկոմխորհի վորոշմամբ, այդ սիստեմի փոխարեն՝ ընթացիկ սեզոնում բարդանները տրվելու են բամբակաբուծներին միայն ժամանակավոր գործածության համար, պարտադիր պայմանով վոր նրանք ոգտագործվեն բացառապես բամբակի բեռնակրության համար և անպատճառ վերադարձվեն հում բամբակի հավաքի և փոխադրության ավարտումից հետո:

Բարդանների մթերումը

Ռավենդուկի (բարդանների համար հատուկ քաթան) ներմուծման չափով բոլոր գործարանավարչությունները կազմակերպում են և ստիճանաբար կիրառում են ռավենդուկից բարդաններ ձևահարդարելու աշխատանքը: Բարդանների պակասորդ քանակությունը վորոշելիս պետք է յելնել հում բամբակի բերքատվությունից և մատակարարման սահմանված նորմաներից, անպատճառ հաշվի առնելով հին, խնամքով կարկատած և շրջանառության համար պիտանի բարդանների կանխիկ քանակությունը:

Գնման կայաններում չպիտի տեղի ունենա բարդանների մթերադրում: Բոլոր գնման կայանները մատակարարվում են այն գործարանների կողմից, վորոնց նրանք հարակցված են, հաստատված շրջանաբաշխման համաձայն:

Բարդանների ձևահարդարը, կարը, դրոշմումն ու հանձնման ժամկետները:

Բարդանների ձևահարդարը ռավենդուկից պետք է կատարվի՝ ճշտությամբ պահպանելով նրանց համար սահմանված չափը (լաթի ամբողջ յերկարությունը—յերեք մետր): Ռավենդուկի արձակումը ձևահարդարի համար և նրանից ստացված բարդանների քանակությունը նշանակվում է առանձին արձանագրության մեջ, ամենօրյա պարտադիր ստուգման յենթարկելով ստացված բարդանների և ռավենդուկի մնացորդի առյերես քանակության համապատասխանությունը նրա բաց թողած քանակությանը:

Ծանոթություն: Պատրաստված բարդանների չափը պարտադիր է մեջընդմեջ ստուգել:

Բարդանների կարի հարցի լուծումը վերապահվում է գործարանավարչության: Զկարած լաթեր բաց թողնելու դեպքում, անհրաժեշտ է բամբակ հանձնողներին մատակարարել համապատասխան քանակությամբ թել (չպատատ) բարդաններ կարելու համար:

Բոլոր բարդանները պետք է դրոշմված լինեն գործարանի դրոշմով, յերկու ծայրերում դրսի կողմից՝ նշանակելով №-ն և տեղը: Դրոշմն ունենալու յե հետևյալ ձևը.

Ա. Բ. Տ.
ԳՈՐԾԱՐԱՆ №.....
1931 Թ.

Բարդանների դրոշմումն անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի անհնարին լինի սեփական հին, նախկին տարիներից դյուղացիության մոտ մնացած, բանդանների անպատիժ վերադարձը՝ տրված նոր բարդանների փոխարեն: Միևնույն դրոշմով պարտադիր դրոշման պետք է յենթարկվեն նաև բոլոր հին առևրես բարդանները, վորոնք նշանակված են հումությով չրջանառություն կատարելու և բամբակարու�ներին հանձնելու համար:

Գնման կայաններին բարդաններ մատակարարելու գործը պետք է վերջանա սեպտեմբերի 1-ին, իսկ բամբակ հանձնողներին պետք է սկսել բաց թողնել սեպտեմբերի 1-ից՝ անպատճառ վերջացնելով այդ սեպտեմբերի 15-ից վոչ ուշ:

Բարդանների մատակարարումը գնման կայաններին

Բացի բարդանների այն քանակությունից, վոր պետք է բաց թողնվի բամբակ հանձնողներին (3-ական հատ մեկ տոննա հումության համար), բոլոր գնման կայանները պետք է մատակարարված լինեն բարդաններով՝ հում բամբակը փոխադրելու և բամբակարուսներին իրենց հում բամբակով բերած բարդանների փոխարեն նորերը վերադարձնելու համար: Այդ նպատակով գործարանները պետք է բաց թողնեն բարդաններ այն հաշվով, վոր հումության յուրաքանչյուր տոննին ընկնի յերկու բարդան:

Ի՞նչ պայմաններով են բաց թողնվում բարդանները

Նշանակված նորմաների համաձայն, բարդանների հասանելիք քանակությունը տրվում է բամբակ հանձնողներին ժամանակավոր գործածության (պրոկատի) պայմաններով, առանց կանխիկ վճարման, գրելով նրանց արժեքը համապատասխան անձնական հաշիվների մեջ՝ հատը յերկուական ռուբլով կոլտնտեսությունների համար և հատը վեցական ռուբլով՝ անհատականների (չքավոր և միջակ տնտեսությունների) համար այն պայմանով, վոր բարդաններն ոգտագործվեն բացառապես բամբակի փոխադրության համար և նրանց կարիքն անցնելու չափով անպատճառ յետ վերադարձվեն, ըստ այնմ, բարդանների այդ վերադարձը պետք է ավարտվի 1931 Թ. դեկտեմբերի 20-ից վոչ ուշ:

Ծանոթություն. — Կուլակային և ունևոր տնտեսություններին բարդաններ չեն տրվում:

Բարդանների վերադարձն ապահովելու համար կոլտնտեսություններից վերցվում է հանձնագիր մեզ վերապահելով իրավունք՝ բարդանները ժամկետին չվերադարձնելու դեպքում արժեքը դուրս գալ բամբակի դիմաց նրանց հասանելիք գումարներից, կամ դանձել դրանց արժեքը յեռապատիկ չափով, իսկ անհատականներից բաց թողած բարդանների արժեքը դուրս գալ այն գումարներից, վոր հասնում է բեռնակրության սկզբնական չրջանում նրանց բերած ու հանձնած հում բամբակի դիմաց: Բռնված գումարնե-

ը վերադարձվում են բամբակաբույծներին՝ բարդանները նրանցից յետ ստանալու չափով, ըստ այնմ, այդ գումարները տրվում են նրանց լիովին կերպով այն դեպքում, յերբ վերադարձրած բարդանները չեն կարճացրած և կասկած չեն հարուցանում (սահմանված դրոշմերով), իսկ հակառակ դեպքում՝ բռնված գումարները վերադարձման չեն պատկանում և բամբակ հանձնողներին պահանջ ե ներկայացվում՝ մեր բարդաններն անպատճառ վերադարձնելու մասին:

Բարդաների հանձնագրի ձևը:

Վերցվող հանձնագրի ձևը հետևյալն ե.

ՀԱՆՁՆԱԳԻՐ

— Ներկա հանձնագիրը տրված ե.....
..... (այս ինչ) կոլտնտեսության անունից Անդրբամբակտրեստի .....
№ ..... բամբակագործարանին առ այն, որ հիշյալ կոլտնտեսությունն իրոք ստացել ե գործարանից ժամանակավոր ոգտագործման համար (այսքան) նոր և (այսքան) գործածության մեջ յեղած բարդաններ, որոնք պարտավորվում ենք ոգտագործել ուղիղ նպատակին՝ բացառապես հում բամբակը դեպի հանձնման սահմանված տեղը փոխադրելու համար, ոչ մի դեպքում թույլ չատրվ նրանց շահագործումն ուրիշ նպատակներով։

Բոլոր ժամանակավոր ոգտագործման համար ստացված բարդանները, գործարանի սահմանված դրոշմով, մենք պարտավորվում ենք վերադարձնել նրանց կարիքն անցնելու չափով, անպատճառ վերջացնելով նրանց լիովին վերադարձը 1931 թվի դեկտեմբերի 20-ից ոչ ուշ։

Յուրաքանչյուր կորած կամ ուրիշ պատճառներով պակասած (արձանագրությամբ հաստատված) և թերահանձ բարդանի համար մենք պարտավորվում ենք վճարել բամբակագործարանին վեցական ռուբլի։

Բարդանները ժամանակին (դեկտեմբերի 20-ը 1931 թ.) չ'հանձնելու դեպքում, գործարանավարչության իրավունք ե տրվում կոլտնտեսության՝ հանձնած բամբակի դիմաց՝ հասանելիք գումարներից դուրս դալ նրանց արժեքը, հաշվելով վեցական ռուբլի յուրաքանչյուր թերահանձ բարդանի համար։

(Կոլտնտեսության վարչության նախագահի ստորագրությունը)։

VI ԱՊՐԱՆՔԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Ապրանքամատակարարման հիմնական սկզբունքները

ԱՍՑՆՀ Ժողկոմխորհի վորոշմամբ (զետեղված «Զարյա Վոստոկա»-յում, առ 13 ոգոստոսի, 1931 թ., № 221), առաջարկված ե Անդրմատժողկոմատին և Անդրկոոպմիությանը փոխադրել բամբակային շրջանները 1931 թվականի բերքահավաքի ժամանակմիջոցում հետևյալ արդյունաբերական ապրանքները.

Բամբակյա չորեղեն	9·466·000	ռուբ.
Շաքար	1·740·000	»
Թեյ	548·000	»
Բամբակի ձեթ	70·000	»
Տնտեսական սապոն	225·000	»
Կրկնակոշիկներ	957·000	»
Կաշվե ապրանքներ	304·000	»
Կոշիկներ	3·915·000	»
Արդյուն. այլ ապրանքներ	5·123·000	»
Ընդամենը	22·349·000	»

մեծագույն չափով ապահովելով ներմուծվող ապրանքների տեսակների ընտրողականությունը դյուղացիական բնակչության պահանջներին համապատասխան: Ներմուծումը պետք ե կատարվի անընդհատորեն՝ հում բամբակի հավաքի և գնման կայաններում յեղած մուտքի համեմատ: Գործարանների տեսչությունը, գնման կայանների վերակացուները պարտավոր են կապվել սպառողական կոոպերացիայի հետ և անմիջապես, ապրանքը դալուն պես, հայտնել այդ մասին բամբակաբույծներին և խստիվ հետևել, վոր-

պեսզի շրջաններում ստացվող արդյունաբերական ապրանքները հասնեն անմիջականորեն սպառող-բամբակարույծին և համապատասխանեն վորակով ու տեսակով բամբակարույծների պահանջներին, նմանապես անհրաժեշտ է հետևել, վորպեսզի արդյունաբերական ապրանքների գները սպառողական կոոպերացիայի կողմից ուղիղ նշանակված լինեն և վորպեսզի տվյալ շրջանի խանութներում յեղած ապրանքների գների միջև չլինի խոշոր զանազանություն:

Սպառողական կոոպերացիայի մատակարարման գործում նկատված բոլոր թերությունների մասին անմիջապես հայտնել տեղական կազմակերպություններին և գիտություն, նմանապես մեզ նաև հաղորդել՝ համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:

Հաց բաց թողնելու կարգն ու նորման

1931 թվականի համար սահմանված են հաց բաց թողնելու հետևյալ նորմաները մեկ տոննն հումույթի դիմաց՝

ՏԱՐԵԿԱՆ ՆՈՐՄԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐՈՎ

	Սոլտանաու-թյուններին (ցենտներ)	Ամերիկյան չքավոր և մի-ջակարգի տեսակներ (ցենտներ)
1-ին գոտի—այն շրջանները, վորտեղ արգելված է հացահատիկային կուլտուրաների ցանքը (մեքեն. վոռոգման շրջանները) .	4,1	5,4
2-րդ գոտի—Հայաստանի ՍՍՀ և Նախիջևանի ՍՍՀ	3,8	4,95
3-րդ գոտի—Ադերբեյջանի ՍՍՀ առանց մեքենայան վառադման շրջանների և Վրաստանի ՍՍՀ	3,0	3,9

Հացամթերքներ բաց թողնելու ժամկետները

Սահմանված նորմաների հաշվին տրված է՝

ա) 20 տոկոս — կոնտրակտացիայի և ցանքի ժամանակաշրջանում.

բ) 15 տոկոս — ստուգումից և առաջին քաղհանից ու կուլտիվացիայից հետո.

գ) 15 տոկոս — ստուգումից և յերրորդ քաղհանի ու կուլտիվացիայի ավարտից հետո:

դ) մնացյալ 50 տոկոսը պետք է տրվի բամբակամթերման ժամանակամիջոցում՝ հումույթի հանձնման ընթացքի համեմատ:

Ծանոթություն. — Ունևոր և կուլակային տնտեսությունները մթերաբաշխումից զրկված են:

Ալյուրի մատակարարումը ցորենի փոխարեն

Հացի մատակարարման ընդունված նորման հաշվում է հացահատիկներով, այսինքն՝ ցորենային մխավորներով: Դրա հետևանքով բամբակարույծներին հացահատիկի փոխարեն ալյուր բաց թողնելիս պետք է ի նկատի ունենալ նրա տոկոսայնությունը, ա. ի.՝ յեթե տրվելիք ալյուրը 85 տոկոսային է, իսկ բամբակարույծին հասնում է 100 կիլոգրամ հաց հատիկներով, ապա ուրեմն պետք է բաց թողնել 85 կիլոգրամ ալյուր, իսկ 95 տոկոսային ալյուր բաց թողնելիս՝ 100 կիլոգրամ ցորենի փոխարեն — 95 կիլոգրամ ալյուր:

Բամբակարույծներին հացը ցորենային մխավորներով բաց թողնելիս, ապլրայի (պարկի) կշիռը պետք

և հաշվել կես կիլոգրամ, իսկ ալյուրով տալիս՝ պարկի կշիռը (ալյուրով լեցուն) ընդունել վորպես զուտ կշիռ (նետտո)։

Բամբակարուլծներին ցորենի կամ ալյուրի մատակարարումը մեր ապրայով խստիվ արգելվում է։ Այդ կարգի խախտման մեղավորները կենթարկվեն քրեական պատասխանատվության։ Պարկ – ապրայի ամբողջ Միության մեջ զգացվող սուր կարիքը հարկադրում է մեզ հրավիրել գործարանների տեսչության և գնման կայանների վերակացուների աչալուրջ ուշադրությունը (նրանց վրա դնելով կատարման համար անձնական պատասխանատվություն) պարկ–ապրայի ռացիոնալ ոգտագործման և այն ըստ պատկանելույն Հացմթերքյանը ժամանակին վերադարձնելու անհրաժեշտության վրա, վորպեսզի խուսափել բամբակարուլծների հացի նորմալ մատակարարման հնարավոր խանգարումներից և ընդհատումներից։

Ծանոթություն. 1.—Եթե չեռմարանում կա ալյուր և ցորեն, առաջին հերթին բաց է թողնվում ալյուր, վորպես վտանգի ավելի չուտ յենթարկվող։ 2. Եթե չեռմարանում կա 85 և 96 տոկոսային վորակի ալյուր, ապա բաց է թողնվում այն, յեղած քանակի համաձայն, համեմատական չափով։

Հացամթերքների ընդունելությունն ու պահեստը

1. Հացամթերքների փոխադրության ժամանակ՝ յերկաթուղային կայարանից, նավահանգստից կամ բամբակագործարանից՝ անհրաժեշտ է ծածկել նրանք

բրեզենտներով, վոչ մի դեպքում թույլ չտալով, վոր այդպիսիները տամկանան։

2. Ցորենը պետք է դատարկել փայտյա հատակ ունեցող չռեմարաններում՝ նախապես կատարելով հատակի վերանորոգում, ծածկելով բոլոր ճեղքերը, խնամքով սրբել հատակը և ներքին պատերը փոշուց։

Ծանոթություն. — Թույլ է տրվում նաև ցորենի պահեստը թափածո վիճակում շաղանյութ (ցեմենտոյա) հատակ ունեցող չռեմարանների մեջ այն պայմանով, յեթե հատակը ստորյերկրյա ջրեր չե թափանցում և չռեմարանը լավ ոդափոխության է յենթարկվում։

Հացամթերքների վնասման առաջն առնելու համար պահեստարանների վերակացուները՝ պատասխանատու լինելով պահեստի և վնասման համար գործարանավարչության առաջ՝ պարտավոր են ամեն որ նայել այդպիսիներն և վնաս հայտնաբերած դեպքում (ալյուրի ջեռացումից, յերկայնաքիթներից, կրծողներից և այլն) անմիջապես համապատասխան միջոցներ ձեռք առնել։ Պահեստարանների՝ դրանց վերակացուների կողմից կատարվող զննությունից անկախ, գործարանի վարչությունը, հանձինս տեսչի կամ նրա փոխանորդի, իսկ գնման կայաններում՝ գնման կայանի վերակացուները պարտավոր են, չաբաթը 2—3 անգամից վոչ պակաս, անձնապես զննելու պահեստարանները։ Պահեստարանների, ինչպես նրանց վերակացուների, նույնպես և վարչության կողմից կատարված՝ զննությունների մասին արձանագրություն է կատարվում գրքի մեջ։

Ուրիշ մթերքների և ապրանքների (սերմեր, պարարտանյութ և այլն) պահեստի համար պետք է առաջնորդվել ներկա կանոններով՝ հարմարվելով այդ ապրանքների և մթերքների առանձնահատկություններին:

Հացամթերքների արձակման գները

Հացամթերքների գները բերքահավաքի կամպանիայի ժամանակաշրջանում ԱՍՖԽՀ բոլոր շրջանների համար, անկախ փոխադրության արժեքից, հաստատվում են միևնույնը, այսինքն՝

	Փթի գինը		Կիլոյի գինը	
	Ռ.	Կ.	Ռ.	Կ.
Տեղական և բերված ցորենի համար	—	—	—	10,4
95–96 տոկոս. ցորենի ալյուրի . . .	—	—	—	12,8
85 » » » . . .	—	—	—	15,3

Ցուցված գները հաստատված են մինչև այժմ գոյություն ունեցող կայուն գների հիման վրա (ցորենը՝ 1 ռ. 50 կ., 95—96 տոկոս. ալյուրը՝ 1 ռ. 90 կոպ. և 85 տոկոս. ալյուրը՝ 2 ռ. 30 կ.) ավելացնելով դրանց՝ փոխադրության, բեռնարարձի ու բեռնաթափի արժեքն և ուրիշ ծախքեր միջին գնով:

Հացամթերքների արձակման կարգը վերջնական հաշվեհարդարի ժամանակ

Եթե ցանքատերը լիովին կատարել է ցանքի և բամբակենու մշակման պայմանները, սակայն հում բամբակի վերջնական հանձնման ժամանակ պարզվի,

որ նա հանձնել է պայմանագրով որոշված քանակությունից ավելի կամ պակաս հումություն, այդ դեպքում հացամթերքների մատակարարման վերջնական հաշիվը կատարվում է փաստորեն հանձնած հումության համեմատ, յելնելով հացամթերքների մատակարարման հաստատված տարեկան նորմայից և հաշվի առնելով այն, ինչ որ արդեն բաց է թողնված բամբակի կոնտրակտացիայի, մշակման և հանձնման ժամանակաշրջանում:

Լինտերի մատակարարումը

Բամբակի տեղանիստի՝ բնակչության մոտ մնալու, դեմ պայքարելու նպատակով ԱՍՖԽՀ ԺողկոմԽորհը հանձնարարել է մեզ՝ բամբակացաններին, հում բամբակի հավաքի ժամանակաշրջանում, լինտեր մատակարարելու գործը՝ ամեն մի տնտեսության յերեքական (3) կիլոգրամ: Վերոգրյալն աջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է Ձեզ վաղորոք մթերել, ցանքատերերի թվի համեմատ, բավարար քանակությամբ լինտեր՝ կշռելով այն զատ-զատ բաժիններով 3-ական կիլոգրամ (թղթով փաթաթել և կապել):

Այդ նպատակով ոգտագործեցեք ինչպես առերես, նույնպես և նոր հումության զտումից ստացվելիք լինտերը: Գնման կայանները մատակարարվում են լինտերով գործարանի հայեցողությամբ՝ հատակշռված կամ վոչ հատակշռված ձևով և վերջին դեպքում բարեպատեհ մթերումը (հատակշիռը) կատարվում է գնման կայանի միջոցով:

Լինտերը բաց է թողնվում կանխիկ դումարով՝ 90-ական կոպեկ յուրաքանչյուր կիլոգրամը բռուտտո քաշով։

Ծանոթություն։ — Լինտերը փաթաթելու և կապելու համար պետք է ոգտագործել հին լրագրային թուղթ և գործածության մեջ յեղած թել (բարդաններից հանած) և ամեն մի կտորն անել 3-ական կիլոգրամ բռուտտո քաշով։

VII ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՐՈՒՄՆ ՑԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կանխավճարների իր ժամյա մարման նշանակությունը

Բամբակենու ցանքի ու մշակության կազմակերպության ժամանակաշրջանում բամբակաբույծներին բաց թողած վարկերը բացառապես արտադրական նշանակություն ունեն և պետք է լիովին վերադարձվեն գնման կամպանիայի ժամանակ։

Մեր վարկը կարճժամանակյա յե և կրում է զուտ նպատակահատուկ բնույթ։ Գյուղացիության կողմից կանխավճարների ոգտագործումն ավելի յերկար ժամկետով, քան նախատեսված է պայմանագրով, առաջ կբերի խառնաշփոթ և պետության ֆինանսական քաղաքականության վիժում, նույնպես և դժվարություններ կստեղծի հաշիվները ճիշտ հարդարելու գործում պարտաճանաչ բամբակաբույծների հետ, վորոնք կոնտրակտացիոն հանձնառությունները լիովին կատարել են։

Անձնական հաշիվները «աժուռ» վիճակի բերել և տոկոսները հաշվել

Դրամական տնտեսության ճիշտ տնորինությունն անխզելի կերպով կապված է հաշվապահական պատշաճ հիմքերի վրա դրված ու ժամանակին կատարվող հաշվառքից և հաշվետվությունից։

Առաջին հերթին անհրաժեշտ է գնման կամպանիայի ժամանակաշրջանում առ որյա («աժուռ») վիճակի բերել բոլոր ցանքատերերի անձնական հաշիվները։

Այդ խնդիրը պահանջում է՝

ա) վորպեսզի բացվեն բոլոր գրքերը ցանքատերերի անձնական հաշիվները տանելու համար.

բ) վորպեսզի մինչև սեպտեմբերի 1-ը հաշվել յուրաքանչյուր ցանքատերի վրա տոկոսներ՝ մինչև սեպտեմբերի 1-ը տրված բոլոր դումարների համար.

գ) վորպեսզի կարգի բերվեն ցանքատերերի պարտքերի ցուցակները, նախապես ստանալով վերջիններս կոոպերացիայից՝ անցյալ տարիների պարտքերի և Անդրտրակտորկենտրոնից՝ վարի ու մշակության վերաբերյալ.

դ) Վորպեսզի յուրաքանչյուր ցանքատերի հետ վերջնական հաշվեհարդարի ժամանակ նրա պարտքի վրա սեպտեմբերի 1-ից հաշվել տոկոսներ՝ մարումների չափով հետզհետե պակասող դումարից.

ե) Վորպեսզի ցանքատերերի հետ ունեցած այն շրջանառումները, վորոնք ուղղակի հարաբերություն չունեն կանխավճարներին և տոկոսներին,

անմիջական կերպով գրանցվեն մյուս հաշիվների մեջ, ինչպես, որինակ՝

1) Բամբակի փոխադրության լրացուցիչ վճարումները.

29 Հացի, լենտերի և այլն մատակարարումն առձեռն հաշվով.

3) Տուժանքի (պայմանագանցության) գանձումն:

4) Նախկին տարիների կանխավճարները կոոպերացիայի հաշվին:

5) Վարի և մշակույթի աշխատանքների առթիվ վճարումներ Անդրտրակտորկենտրոնի հաշվին. (ՄՏԿ)

6) Բարդանների գրավականները

Կանխավճարների գանձումն

Բամբակի բերքահավաքի ընթացիկ տարվա կամպանիայի աջողությունն անմիջական կապակցության մեջ է գտնվում տված կանխավճարների լիակատար և իրժամյա վերադարձի հետ՝ բերքի իրացման նախնական իսկ չրջանում: Ուստի կանխավճարների գանձումը պետք է կազմի բոլոր գործարանավարչությունների և գնման կայանների առանձին հոգատարության առարկան:

Ըստ այնմ, պետք է հաշվի առնվեն բոլոր հնարավորությունները առաջադրված նպատակին առանց բարդությունների հասնելու համար:

Կանխավճարների չվերադարձը ժամանակին, բնականորեն, պայմանավորելու յե, գնման կայանների կողմից, դրամական պահանջների աճում, իսկ այդ կստեղծի ֆինանսական լարվածություն և հաստատված ֆինպլանի խախտում:

Բացի այդ, կանխավճարների վոչ լրիվ գանձումը կբերեի գնման կայանների համար, սեզոնի վերջին, լուրջ հետևանքներով հղի մի դրություն՝ պարտադանաչ ցանքատերերին, նրանցից ընդունած հում բամբակի համար, հասանելիք վերջնական վճարումների դավառում:

Ֆինանսական հնարավոր ճեղքվածքների առաջն առնելու համար, գործարաններին ու գնման կայաններին անհրաժեշտ է սեզոնի հենց սկզբից ունենալ անդուլ հսկողություն կանխավճարների մարման ընթացքին: Այդ իրականացնելու համար, անպայման միջոցառում պետք է հանդիսանա բամբակագործների անձնական հաշվեգրքի ամենորյա ստուգումը: Գնման կայանները պետք է վոչ միայն հումույթ չհանձնողների ցուցակները կազմեն, այլև անպարտադանաչ ցանքատերերին անմիջապես այցելելով, հարկադրել նրանց՝ ժամանակին հանձնելու հում բամբակն ու մարելու կանխավճարները:

Այդ կողմից, դրական արդյունք կարող են տալ հասարակական ներգործության միջոցները, ա. ի. գյուղի չքավորության և գյուղակտիվի ներգրավումը՝ անպարտադանաչ և չարանենգ ցանքատերերի հայտնաբերման գործին՝ լայն բացատրական կամպանիա մղելով գյուղացիական զանգվածների մեջ, միաժամանակ կազմակերպելով տեղերում հասարակական – ցուցադրական պրոցեսներ չարանենգ ցանքատերերի վերաբերմամբ:

Հում բամբակի հանձնման հերթականության հաստատված կարգը՝ ըստ գյուղերի դյուրացնում է անձնագրքի միջոցով ցանքատերերի ստուգման և մար-

նավորապես հումքի հանձնումից ու կանխավճարների մարումից խուսափողների հայտնագործման հնարավորությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է հետևել, վորպեսզի առանձին ցանքատերերի կողմից հանձնվող հում բամբակի քանակությունը համապատասխանի նրանց ցանած տարածության: Դրանով պետք է առաջն առնվի ցանքատերերի վորոշ մասի սուտ մարդկանց միջոցով բամբակ հանձնելու կեղծումների հնարավորության:

Բացի դրանից, առանձին ուշադրություն պետք է դարձնել, վոր գնման կայաններն ներկայանան հում բամբակ հանձնելու համար բոլոր բամբակարբույծները: Այդ նպատակով գործարաններն ու գնման կայանները կազմում են առ 15 հոկտեմբերի, 1 նոյեմբ., 15 նոյեմբերի և առ 1 դեկտեմբերի չներկայացած ցանքատերերի ցուցակները և մեքենա – տրակտորային կայանների ու տեղական կազմակերպությունների միջոցով համապատասխան միջոցներ են ձեռք առնում նրանց հրավիրելու և բամբակը հանձնելու համար:

Դրամարկղային պլանների ներկայացումը

Ֆինանսական հնարավոր ճեղքվածքների առաջն առնելու և հաշվարկու դրամարկղներին կանխիկ միջոցների անընդհատ մատակարարումն իրագործելու համար՝ բամբակարբույծների հետ հաշվեհարդարն իր ժամանակին ապահովելու նպատակով՝ գործարանների վարչությունները պետք է մեծագույն ուշադրություն հատկացնեն դրամարկղային պլանների կազմության և ապահովեն նրանց ժամանակին ներկայացումը Պետբանկի համապատասխան բաժանմունքին և գնման կայանների հաշվեհարդար դրամարկղներին:

Ինչպես յեռամսյա, նույնպես և ամսական դրամարկղային պլանները կազմելու ժամանակ պետք է հաշվի առնվեն, առանց վորևե բացառության, բոլոր յենթադրվելիք վճարումներն ու ներմուծումները, ի թիվս վոչոնց և բարդանների դրավականների մուտքը, նախկին տարիների կանխավճարների մարումը կոոպերացիայի հաշվին, վարի և մշակույթի ծախքերի վճարումներն Անդրտրակտորկենտրոնի հաշվին և այլն:

Բացի դրանից, վորպեսզի հաշվեհարդար դրամարկղները ժամանակին ամրացվեն կանխիկ միջոցներով, գնման կայանները վաղորոք (2—3 որ առաջ) հայտնադիր են ներկայացնում հաշվեհարդար դրամարկղներին կանխիկ դրամի պահանջի մասին՝ Պետբանկի համապատասխան բաժանմունքից այն ստանալու համար:

Կանխավճարների գանձման չափն ու կարգը

Կոլտնտեսություններից, արտադրական ընկերություններից և անհատական տնտեսություններից, համաձայն նրանց կնքած պայմանագրի, հում բամբակ ստանալու ժամանակ պետք է կատարել գանձումներ բոլոր տեսակի, նրանց վրա պարտք դրված, կանխավճարների հաշվին հումքի ներմուծման հենց սկզբից հետևյալ կարգով՝

Հանձնված հումքի արժեքից առաջին հերթին պիտի բռնել բաց թողած բարդանների դրավականը: Մնացորդ գումարը գանձվում է ընթացիկ տարվա

ուված կանխավճարները մարելու և վարի ու մշակույթի ծախքերն Անդրտրակտորկենտրոնի հաշվին ծածկելու համար: Ցուցված մնացորդը բաշխվում է Անդրբամբակխության և Անդրտրակտորկենտրոնի միջև պարտքերի համեմատ: Որինակի համար, նրանք հանձնել են բամբակ 100 ռուբլու:

Բռնվում է բարդանների գրավականը.

3 բարդանը × 6 ռուբ. — 18 ռուբլի.
Մնում է բաշխման համար — 82 ռուբլի.

Ցանքատերի 1931 թ. կանխավճարների պարտքն է՝
150 ռ. կամ տոկոսով ընդհանուր գումարի վրա՝ 75 տ.
վարի պարտքն է՝
50 ռ. » » » » 25 տ.

Ընդամենը 200 ռ. 100 տ.

Ուրեմն, 82 ռուբլու 75 տոկոսը, կամ 61 ռ. 50 կ. դանձվում է ընթացիկ տարվա կանխավճարների մարման համար, իսկ նրա 25 տոկոսը, կամ 20 ռ. 50 կ. դանձվում է վարի համար Անդրտրակտորկենտրոնի հաշվին:

Ընթացիկ 1931 տարվա կանխավճարները և Անդրտրակտորկենտրոնին, վարի ու մշակույթի համար, հասանելիք գումարները վերջնականապես դանձելուց հետո, գնման կայանները ձեռնարկում են նախկին տարիների կանխավճարների հին պարտքերի դաձման՝ կոոպերացիայի հաշվին. այնպես վոր, բամբակաբույծները հում բամբակը հանձնելիս վանխիկ դրամ առձեռն կարող են ստանալ միայն ամբողջ վերոհիշյալ պարտքի վերջնական վճարումից հետո:

Զգանձված կանխավճարների առթիվ դատապահանջի ներկայացում

1931 թվի դեկտեմբերի 20-ից վոչ ուշ գործարաններն ու գնման կայանները պարտավոր են հանձնել կոոպերացիային և Անդրտրակտորկենտրոնին բամբակարբույծների չծածկված պարտքերի ցուցակները:

Դրա հետ միաժամանակ և միևնույն ժամկետին, գործարաններն ու գնման կայանները կազմում են ընթացիկ 1931 թվականի բամբակարբույծներից լրիվ չընդանձված կանխավճարների ցուցակները և ներկայացնում են դրանք դատական համապատասխան մարմիններին ստիպողական դանձման համար, առանձնապես հատկանշելով բամբակը չարանենգորեն չհանձողներին՝ նրանց յենթարկելու համար բացի նյութական պատժից՝ նաև քրեական պատասխանատվության:

Վիճակագրական հաշվետվությունը բերքահավաքի կամպանիայի մասին

Իր ժամյա վիճակագրական հաշվետվությունը բերքահավաքի կամպանիայի ընթացքի մասին հանդիսանում է մի կողմից՝ կամպանիայի ճիշտ ղեկավարությունն ապահովելու անհրաժեշտ պայմանն և մյուս կողմից՝ ապդարնակչության լայն զանգվածներին կամպանիայի ընթացքին ծանոթացնելու միջոցը:

Համաձայն Անդրժողկոմխորհի և Անդրյերկկոմի վորոշման, գնման կայանների հաշվառքն ու հաշվետվությունը պետք է հնար յեղածին չափ դյուրացնել:

Ցելնելով դրանից, կայանների ոպերատիվ հաշվառքի նպատակին են ծառայելու հաշվապահական

պաշտոնագրերը (դոկումենտները), վորոնց յենթադրելի ձևն ու ներկայացման կարգն յերաշխավորում են բերքահավաքի կամպանիայի ընթացքի բոլոր խնդիրների իրժամյա ընդգրկումը:

Բամբակաբույծներն պարտավոր են նույն պաշտոնագրերի ձևով (այդ առթիվ հատուկ հրահանգով սահմանված) ներկայացնել Անդրբամբակտրեստին ամփոփումներ՝ այս կամ այն գործարանի գործունեության չրջանի մեջ մտնող դնման կայանների ամբողջ ցանցի առմամբ, սահմանելով անդուլ հակողություն դնման կայաններից անհրաժեշտ պաշտոնագրերը ստանալու և ամփոփումները տրեստին ուղարկելու ժամկետների ճիշտ կատարման համար:

Պետական մարմիններին կամպանիայի ընթացքին իրազեկ դարձնելու և, անհրաժեշտ դեպքում, համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով՝ կներկայացվի ժամկետային տեղեկույթ (ինֆորմացիա) կամպանիայի ընթացքի մասին Անդրբամբակմիության կողմից սահմանվելիք հատուկ կրճատ ձևերով:

VIII ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Տեղեկություններ շարժական կազմի պահանջի մասին

Բոլոր փոխադրությունները կատարվում են պլանային կարգով, իրագործվում են յեռամսյա և միամսյա հաստատված պլանների հիման վրա:

Թեև մեր բեռների փոխադրությունը կատարվում է մոտավոր ճշտության (որիենտիր) պլանները, սակայն պատասխանատվությունից խուսափելու համար, պլանները պետք է ուղղել:

Բամբակային բեռների փոխադրության ամսական պլանները կազմում է Անդրբամբակտրեստը գործարանների հայտնած պահանջների հիման վրա և ներկայացնում է փոխադրության հարցերով զբաղվող տեղական խորհրդակցություններին ու Անդրկոմկոմայան Պլանա – չահագործական վարչության:

Առաջիկա ամսական փոխադրությունների ճիշտ պլանը կազմելու համար անհրաժեշտ է, վոր Անդրբամբակտրեստը գործարաններից ստանա առավելապես ճիշտ տեղեկություններ, ուստի գործարանավարչությունը ծրագրվող ամսվա նախընթացի 5-ից վոչ ուշ պետք է ներկայացնե Անդրբամբակտրեստին հիշյալ տեղեկությունները (որինակ, հոկտեմբեր ամսվանը՝ մինչև սեպտեմբերի 5-ը, նոյեմբերինը՝ մինչև հոկտեմբերի 5-ն և այլն), վոչ մի դեպքում թույլ չըտալով ուշացումներ, վորովհետև դրա հետևանքով մեզ կարող են դուրս վտարել սպասարկյալների ցանկից, վորոնց պահանջումները պետք է բավարարվեն:

Հայտարարություն փոխադրվելիք բեռների մասին

Գործարանավարչությունը ներկայացնում է գրավոր հայտարարություն կայարանի պետին՝ նշելով բեռների տեսակն ու քանակը, վորոնք փոխադրության են ներկայացվելու համաձայն որիենտիր պլանի, նույնպես նաև վագոնների քանակն ու տեսակն այդ բեռների բարձի համար:

Հայտարարությանն անպատճառ պետք է կցել բեռնագրեր՝ բոլոր նրանց մեջ պահանջվող տեղեկու-

թյուններով փոխադրության պատրաստ բեռան համար։

Թել-բամբակի փոխադրումը կենտրոն

Կենտրոն փոխադրվելիք թել-բամբակի համար բեռնագրեր կազմելու ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալով։

Ամբողջ թել-բամբակն ուղարկվում է ց'հատուկ կարգադրություն ՀԲԹՄ-ի (Համամիութենական բամբակա - թղթային միություն) հասցեին, Մոսկվա — Կազան յերկաթուղու Ռեբենոյե կայարան, Դերբենտի, Ռոստովի, Կոզլովի, Բյալանի վրայով։

Ցեթե կայարանը հրաժարվի կատարել բեռների փոխադրությունը ցույց տված ճանապարհով, ուրիշ ցուցումներ չտալ և «փոխադրության ճանապարհը—ուղարկողի հայեցողությամբ» սյունյակը չլցնել։

Թել-բամբակի բարձը կատարել վագոնի լիակատար ծավալով, վորովհետև ծածկված վագոնում 12,5 տոննից ավել բարձելիս՝ ՀԲԹՄ-ը գործարանին մրցանակ և բաշխում աղյուսակով վորոշված չափով (աղյուսակը կուղարկվի լրացուցիչ)։

Հրավիրում ենք Ձեր ուշադրությունն այն բանին, վոր առավելապես լիակշիռ վագոնների ժամանակ թել-բամբակի փոխադրության վարձը (ֆրախտը) զգալի չափով պակասում է. այդպես, որինակ, 12 տոննն բեռ ունեցող վագոնի ֆրախտ, 3·000 կիլոմետր տարածության վրա, վերցվում է 1·059 ռուբլի, իսկ 16 տոննն բեռ վերցնող վագոնից՝ 1·355 ռուբ., վոր տալիս է իջեցում բամբակի յուրաքանչյուր տոննին 3 ռուբ. 58 կոպ. չափով։

Յերկաթուղային բեռնագրերի կազմության կարգը

Բեռնագիրը գրվում է բացառապես թանաքով, պարզ և վորոշ, թույլ չտալով վոչ մի աղտ և ուղղումներ, և առավելապես լրիվ։

Բեռնագրերը կազմելիս՝

1) Սյունյակում «բեռան անունը» ցույց տալ բեռան ճիշտ անունը, ինչպես, որինակ՝ ա) բամբակ սերմերից զտված, սեղմած, բ) բամբակ սերմերից չզտված, գ) բամբակենու սերմ.

2) «Կշիռը ցուցմունքով» սյունյակը վերապահել լրացնելու յերկաթուղագծին և պահանջել՝ նշանակել գրով և կշռարարի ստորագրություն։

3) «Ուղարկողի առանձին հայտարարությունները» սյունյակի 3-րդ կետում չնշանակել «կշռին յերաշխավոր եմ»։

4) «Վճարների հաշիվը» սյունյակում, յեթե բեռն ուղարկվում է իրեն պահեստարանից և կշռվում է իրեն կշեռքով՝ կայարանին կցված, պարտադիր է նշանակել.

ա) կշռման կետում — «ուղարկողի կշեռքով».

բ) «Բեռնաբարձի վճարն՝ ուղարկելիս»—«ուղարկողի միջոցներով.

5) «Վճարների հաշիվը» սյունյակի վերջում, 25-րդ կետում, ցույց տալ ուղարկված — «կցված պահեստարանից»։

Ցույց տված նշանակումներն անհրաժեշտ է կատարել նրա համար, վոր յերկաթուղին բեռնաթափի կայարանում չպահանջե հիշյալ վճարումները։

6) «Ուղարկողի հատուկ հայտարարությունները» այնպիսիում հում բամբակ, սերմեր և այլ բեռներ ապրանքով (տարայով) ուղարկելիս աշխատել թույլ չտալ նշանակումներ կատարելու, ինչպես որ՝ անբարեկարգ ապրանք, պատռված պարկեր, թույլ կապ և այլն, վորպեսզի բեռան պակասության դեպքում, մնացը ծածկելու պահանջի բավարարման մերժումից խուսափել:

Թել-բամբակի բեռնաբարձի նորման

Հում բամբակի վագոնային բեռնաբարձի նորմաները, թե ծածկված վագոնների և թե բաց պլատֆորմների համար, չեն սահմանված:

Նկատի ունենալով, վոր հում բամբակի բարձը բաց պլատֆորմների վրա ավելի նպատակահարմար է հանդիսանում, վորովհետև, նախ, կարելի յե բարձել մինչև 15 տոննա, վորով եժանանում է փոխադրության վարձը, և յերկրորդ, կրճատվում է ավելի քան կիսով չափ մատուցվող կազմի քանակությունը, վոր հեշտացնում է նրա բեռնաթափը գործարաններում, անհրաժեշտ է հում բամբակը, ընթացիկ սեզոնում, փոխադրել բաց պլատֆորմներով:

Բացի այնմ, նրանց բեռնավորումը լիովին ոգտագործելու համար անհրաժեշտ է ժամանակավոր կողակներ և միջնակներ պատրաստել նավթուլով կապված, վորպիսի պարագաները պետք է մատակարարե և սարքե բեռ ուղարկողը՝ կատարելով բոլոր նախազգուշությունները՝ պլատֆորմներին վնաս հասցնելուց խուսափելու համար: Բրեզենտները մատակարարում է յերկաթուղին:

Բամբակյա սերմերի բարձման նորման սահմանված է՝ փակ վագոններում — 15 տոննա, պլատֆորմի վրա — 17 տոննա:

Սչքի առաջ ունենալով բեռների փոխադրության գոյություն ունեցող նոր տարիֆը, վորի համաձայն յուրաքանչյուր տոննի ֆրախտը պակասում է՝ վագոնի բեռնավորման ավելանալուն, անհրաժեշտ է խստով հետևել, վոր վագոնի բեռնարարձը կատարվի մինչև նրա ամենաբարձր նորման:

Բեռնաբարձի և բեռնաթափի ժամկետները

Վագոնների և պլատֆորմների բեռնաբարձի և բեռնաթափի համար տրվում է 4 ժամ, ցիստերնների համար, վորտեղ լիցը կատարվում է մեքենայացված յեղանակով՝ 3 ժամ, իսկ վորտեղ ձեռքով՝ 6 ժամ:

Գործարանավարչությունները պետք է խստիվ հետևեն սահմանված նորմաները պահպանելու և թույլ չտալու վագոնները ժամանակից ավել պահել, վորպեսզի խուսափել տուգանք վճարելուց: Շարժական կազմը ժամանակից ավել զբաղեցնելու համար սահմանված վճարները հաղորդված են գործարաններին ս. Թ. ոգոստոսի 11-ին, № 2615 գրությամբ:

Վագոնների առևտրական զննողություն բեռնաբարձի համար

Բեռնաբարձի համար վագոններ մատակարարելու ժամանակ անհրաժեշտ է, վորպեսզի ապրանքի վտանգումից խուսափել, կատարել վագոնների զննումն և հետևել, վոր լավ մաքրված լինեն աղբից ու կեղտից և հատակը լինի միանգամայն մաքուր:

Նախ քան նրանց տրամադրումն ոգտագործման համար, վագոնի մաքրելու պարտականությունն ընկնում է յերկաթուղու վրա:

Բեռների կշռի պակասորդի նորման փոխադրության ժամանակ

Ներկա ժամանակին գործում են յերկաթուղով և ջրային ճանապարհներով փոխադրվող բեռների քաշի պակասորդի հետևյալ բնական չափերը՝

Թել բամբակի և հում բամբակի համար	 2	տոկոս
Ժամբակային սերմերի »	 0,4	»
հացամթերային բեռների »	 0,4	»
» » » թափած	. . . 0,6	»

Ծանոթություն. Այն բեռների համար, վորոնք ճանապարհին թափ են գալիս, բնական պակասորդի նշված նորմաները յերկաթուղային-ջրային փոխադրությունների ժամանակ (որինակ ցորենը) ավելացվում են յուրաքանչյուր բեռնաթափի համար՝ յերկաթուղուց դեպի ջրային կայան և հակառակը՝ 30-ական տոկոսով։

Բեռ ստանալու կարգը

Նշանակյալ կայարան յեկած բեռն խակուշն և յեթ ստացվում է, վորի համար յուղարկուների (եքսպեդիտորների) վրա պարտականություն է դրվում հետևելու այդ բանին։ Ցորենի վերաբերյալ անհրաժեշտ է այդպիսին վերակշռել, քաշի հնարավոր պակասը ձևակերպելու համար, վորից հետո անմիջապես դուրս տանել կայարանական չենքերից (պահեստարաններից)։

Պահեստարաններ ունեցող գործարաններում, յեկած բեռների ընդունելությունը կատարվում է յերկաթուղային մերձաքաշ ճյուղերի վրա, վագոնների բեռնաթափի տեղերում, բեռան քաշի ստուգմամբ։

Բեռների ընդունելությունն ու արտահանումն աշխատել վերջացնել սահմանված ժամկետներին, վորպեսզի խուսափել վագոնները ժամկետից ավել պրաստոյնելու և պահեստի տուգանքներից։ Վագոնների պրաստոյնքի և պահեստի համար սահմանված վճարները հաղորդված են գործարաններին ոգոստոսի 11-ին 2615 №-ով։

Յեթե ապրանքատերը նշանակյալ կայարանում ապրանքը չստանա 3 որվա ընթացքում բեռնաթափից հետո, նա կորցնում է ուշացման վարձատրություն ստանալու իրավունքը։

Յեթե բեռնաթափը կատարվում է ստացողի միջոցներով իր մերձաքաշ ուղիների վրա, այդ դեպքում նշված յերեքորյա ժամկետը պետք է հաշվել բեռնաթափի համար վագոնները մատուցանելու վայրկյանից։

Բեռան քաշի պակասորդի արձանագրությունները և նշանակումները բեռնագրերի մեջ

Բեռան անհամապատասխանություն, պակասորդ, մնաս և կորուստ հայտնաբերելու դեպքում կազմվում են առևտրական արձանագրություններ։

Արձանագրությունների պատճեն բեռնագրի և հաշվի կամ ապրանքագրի հետ պետք է ուղարկել

Անդրբամբակտրետ՝ յերկաթուղուն կամ բեռն ուղարկողին դատապահանջ ներկայացնելու համար:

Այն դեպքում, յերբ քաշի մեջ հայտնաբերվում է թերություն բնական պակասորդից վոչ ավել չափով, արձանագրություն չի կազմվում, յեթե հափշտակության նշաններ չկան և յեթե բեռի փոխադրությունը կտորների համարով ընդունած դեպքում, նրա կտորների թիվը բնականում համապատասխանում է պաշտոնագրերում նշանակված կտորների թվին:

Ստացողի պահանջով այդ պակասորդը ձևակերպվում է նշանակումներով բեռնագրի և նրա զուգորդի մեջ, վորպիսի նշանակումները պետք է վավերացված լինեն կայարանի պետի ստորագրությամբ և կայարանական դրոշմով:

Տեղեկանք վագոններ չմատուցանելու մասին

Այն դեպքում, յերբ թել-բամբակի փոխադրության համար ներկայացրած վագոնների պահանջը չի կատարվում, պետք է աշխատել ստանալ յերկաթուղային կայարանից այդ մասին պաշտոնական տեղեկանք:

IX ԳՆՄԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌԱՇԽՈՒՄԸ

Բացված գնման կայանների քանակը

Հում բամբակի մթերումը աջող կերպով կատարելու և բամբակաբույծների հետ կազմակերպչական փոխհարաբերություններ հաստատելու համար, ԱՍՖԽՀ բամբակային շրջանների սահմաններում կազմակերպվում են 55 մշական և 15 շրջիկ (շարժական) գնման կայաններ՝ Անդրժողկոմխորհի վորոշման համաձայն:

Կոլտնտեսությունների և գյուղական ընկերությունների գնման կայաններին կցորդելու հիմունքները

Առանձին գյուղերի, նրանց մեջ մտնող կոլտնտեսությունների և արտադրական ընկերությունների կցորդումն այս կամ այն գնման կայանին պետք է կատարել յերկու հիմունքներով:

1) Գյուղերի առավելագույն մոտիկ տարածությունը գնման կայանից և այդպիսով բարենպաստ պայմանների ստեղծումը հում բամբակի ներմուծման և կազմակերպչական կապի համար՝ գնման կայանի և մերձակա կոլտնտեսությունների ու արտադրական ընկերությունների միջև:

2) Վարչական շրջանի սահմանների պահպանումը՝ առանձին գյուղերը գնման կայանների վրա բաշխելու ժամանակ:

Գյուղերը գնման կայաններին կցորդելիս՝ հիշյալ կայաններից նրանց առավելագույն մերձակայության հիման վրա, հումույթի փոխադրությունը բամբակաբույծները կատարում են իրենց հաշվին միայն մինչև 10 կիլոմետր տարածության վրա: Հումույթի փոխադրությունը 10 կիլոմետրից բարձր վարձատրվելու յե Բամբակային Միության հաշվին՝ համաձայն Անդրժողկոմխորհի և Անդրյերկկոմի վորոշման (տես 12 էջ, IV-րդ հոդված):

Վարչական շրջանի սահմանների միությունը պետք է անպայմանորեն պահպանել գնման կա-

յանները շրջանաբաշխելիս, քանի որ շրջանային կենտրոնը ընդհանուր առմամբ պատասխանատու է շրջանում բամբակի կամպանիայի կազմակերպության և իրագործման համար:

Վարչական շրջանի միությունն իրականացնելու համար անհրաժեշտ է վերանայել կոլտնտեսությունների և գյուղական միությունների ցանցը՝ նրանց կցորդելու տեսակետից այն վարչական շրջանի գնման կայանին, որին նրանք պատկանում են:

Բերքահավաքի կամպանիայի ընթացքը ձևակերպելու կարգն այն դեպքում, յերբ կոլտնտեսությունները ու գյուղական ընկ–ները կցորդվում են ուրիշ շրջանի գնման կայանին

Որոշ դեպքերում առանձին գյուղերը տնտեսապես ձգտում են (տարածության մերձության և հումույթի փոխադրության հարմարության մըտքով) ուրիշ վարչական շրջանի գնման կայանին և այդ գյուղերի հումույթի փոխադրությունն իրենց վարչական շրջանի գնման կայանին անանպատակահարմար է՝ հանդիպական փոխադրումներից և դրանով հանդերձ փոխադրական միջոցների ավելորդ բեռնավորումից խուսափելու համար:

Ձնայելով այդ հանգամանքին, անհրաժեշտ է յերաշխավորել վարչական շրջանի պատասխանատվությունը՝ շրջանում տարվող աշխատանքի համար ընդհանուր առմամբ:

Այդ իրականացնելու համար գնման կայանը, որ փաստորեն ընդունում է հումույթ ուրիշ վարչական շրջանի կոլտնտեսություններից և գյուղական ընկ·ներից, պետք է ներկայացնե բոլոր հաշվետվության տվյալների պատճենները այն վարչական շրջանի գնման կայանին, որ շրջանին վերաբերում են հիշյալ կոլտնտեսություններն ու գյուղական ընկ·–ները:

Այս դեպքում հաշվետվության սխեմայի որոշ բարդացումն համենայն դեպս կ'ապահովե տվյալ շրջանային կենտրոնի կողմից, բերքահավաքի, շրջանում տարվող, աշխատանքի ու նրա ընթացքի ամբողջական ընդգրկումը:

Այդ միջոցառումները կապահովեն վարչական շրջանի ամբողջությունը՝ գյուղերը գնման կայաններին վրա բաշխելիս:

Գնման կայանների բաշխման կարգը բամբակագործարանների վրա

Գնման կայանների բաշխումը բամբակագործարանների վրա նմանապես կատարվում է վարչական շրջանի սահմանների պահպանության հիման վրա: Սակայն, գնման կայանները գործարանների վրա բաշխելիս անխուսափելի է առանձին գնման կայանների կցորդումը ուրիշ շրջանի բամբակագործարանին՝ այդ գնման կայանների դեպի ուրիշ շրջանի գործարանն ուղեցող տնտեսական ձգողականության պատճառով: (Տարածության մերձությունը, փոխադրության հարմարությունը Քուռ գետի վրայով փոխանակ սայլատար բեռնակրության և այլն):

Այդպիսի գնման կայանների թվին են պատկանում՝ Զուխանլիի գ· կ·–ը Այլ–Բայրամլիի շրջա-

նում (հումուլթը հանձնում է Սալյանի գործարանին, վորովհետև ավելի մոտ է գտնվում Սալյանին, քան Զուբովկային)։ Ալվենդի, Մոլլաքենդի գնման կայանները Քյուրդամիրի շրջանում (հումուլթը հանձնում են Սարիր-Աբաթի գործարանին, ուղարկելով այն ներքև Քուռ գետի հոսանքով)։ Զարզորի գնման կայանը Ուջառի շրջանում (հանձնում է հումուլթը նույնպես Սարիր-Աբաթի գործարանին, ուղարկելով այն Քուռ գետի վրայով, վոխանակ սայլերով Ուջառ կրելու)։ Եջմիածնի գնման կայանը Վաղարշապատի շրջանում (հումուլթը հանձնում է Սարդարաբադի գործարանին, շնորհիվ այդ գործարանի տարածության մոտիկության յերկաթուղային գծով)։

Հիշատակված գնման կայանների շրջանաբաշխության փոփոխությունն և նրանց կցորդումն իրենց շրջանի գործարաններին առաջ կբերե Քրախոտի զգալի ավելացում, հանդիպական փոխադրումներ և այլն։

Սակայն, նախագծված շրջանաբաշխության հետևանքով վոչ մի չափով չպետք է տեղի ունենա տվյալ գնման կայանի առանձնացումն այն շրջանից, վորտեղ տարվել է ամբողջ կազմակերպչական աշխատանքը բամբակենու ցանքի ու մշակության վերաբերյալ։

Ցուրաքանչյուր գնման կայան, թեպետ և հումուլթը հանձնելիս լինի ուրիշ շրջանի գործարանին պարտավոր է տալ լիակատար տեղեկություն այն շրջանային կենտրոնին, վոր տարել է բոլոր կազմակերպչական աշխատանքը։

Այդ դեպքում կայանները իրենց հերթական տեղեկությունը ներկայացնում են յերեք հասցեյով (բացի Անդրբամբակտրեստից), մասնավորապես (պատճենները)՝ ա) այն գործարանին, վորին կցորդված եր տվյալ գնման կայանը մինչև բերքահավաքի կամպանիան, բ) տեղական կազմակերպություններին և գ) այն գործարանին, վորին կցորդված է գնման կայանը բերքահավաքի կամպանիայի ժամանակաշրջանում։

Գործարանների տեղեկատու ամփոփումները կազմվում են հետևյալ կարգով. որինակ, Սարիր-Աբաթի գործարանը հում բամբակի ընդունելությունը Ալվենդի գնման կայանից անց է կացնում հաշվապահական ձևակերպման կարգով, իսկ Ուջառի գործարանը մացնում է իր ամփոփագրի մեջ գնումները և կանխավճարների մարումը, վորպես հիմնական ցուցանիշներ գործարանին վերաբերող պլանային առաջադրանքների։

Շարժական գնման կայաններ

Այն բամբակային գործարանները, վորոնց գործունեության շրջանում գտնվում են խոշոր կոլտնտեսություններ և արտադրական գյուղական ընկ.-ներ՝ գործարանից կամ գնման կայանից 15 կիլոմետրից ավել շարավիղում, կարող են կազմակերպել այդ կետերում հում բամբակի ընդունելություն պարբերաբար, ա. ի. այցելության կարգով։

Վաղորոք, կոլտնտեսությունների և գյուղական ընկ.-ների հետ միասին, նշանակվում են ժամկետեր, յերբ պետք է տեղի ունենա հումուլթի ընդու-

նելությունը, հատկացվում է ընդունելության համար տեղ, ապահովվում է վշեռքով և սայլերով ընդունված հումույթը անմիջապես փոխադրելու համար: Սահմանված ժամկետերի մասին բոլոր բամբակագործները պետք է իրազեկ լինեն: Նշանակված ժամկետերին ընդունողները դալիս են ընդունելության համար վորոշված տեղը, ստացականներով, բեռնագրերով և այլն, կատարում են հումույթի ընդունելություն և անմիջապես ուղարկում են այդպիսին գործարան:

Գործարան կամ գնման կայան վերադառնալուն պես, ընդունողները, համաձայն ընդունված բամբակի դիմաց տված ստացականների պատճենների, կատարում են հանձնված բամբակի հաշվարկությունը: Հումույթ բերած սայլերով ուղարկվում է ցորենի հարկավոր քանակությունն և ընդունելության տեղն և ճանապարհվում, պատրաստ հաշիվներով և դրամով, լիազոր անձ՝ բամբակաբույծների հետ հաշիվները հարդարելու և կանխիկ դրամով ցորեն բաց թողնելու համար:

Թյուրիմացություններից խուսափելու համար, ընդունողը, հումույթի ընդունելության ժամանակ, պարտավոր է հարցնել բամբակաբույծներին հացամթերքների հասանելիք քանակությունը ստանալու ցանկության մասին:

X ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գործարանների աշխատանքի սկսվելով, ավելանում է վոչ միայն փոքրիկ կրակների, այլ և մեծ

հրդեհների հնարավորությունը, յեթե այդ բանին վարչական – տնտեսական և տեխնիկական պերսոնալը պատշաճ ուշադրություն չդարձնե:

Հրդեհների և կրակների պատճառների մի շարք հետախուզումներով և խոր ուսումնասիրություններով հաստատված է, վոր դրանց մեծամասնությունը լինում է անփութությունից, անզգույշ և անտարբեր վերաբերմունքից դեպի հրդեհային անվտանգության կարևոր միջոցները: Հրդեհային դեպքերի առաջն առնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ և խորագույն ուշադրություն դարձնեն հետևյալ միջոցառումների վրա.

1. Բոլորովին ազատել գործարանը մշակության յենթարկված նյութերից, փոխադրելով դրանք ըստ պատկանելության:

2. Սահմանել սայլերի արտադրական բակ թողնելու կարգը:

3. Ուժեղացնել արտադրական բակերի և պահեստարանների լուսավորությունը, վորպեսզի խուսափել լուցկիների գործածությունից և նավթային լուսավորությունից:

4. Անցքերն ու ճանապարհները կուտակումներից ազատ պահել և ռացիոնալ կերպով ոգտագործել պահեստի չենքերը:

5. Սահմանել գործարանների տերրիտորիան տոմսերով մտնելու անխախտ սիստեմը:

6. Ուժեղացնել հսկողություն պահապանների և հրդեհային պահակի պարտականությունների կատարելու նկատմամբ:

7. Ապահովել ջրով նոր հատկացրած գործարանային տարածությունները:

8. Ուժեղացնել պատժի չափն արգելված տեղերում ծխելու համար:

9. Կտրականապես արգելել ոչտագործել հրդեհային կայքը վոչ իրեն հատուկ նպատակով:

10. Կատարել խնամքով հումույթի թիադարձ նախ քան նրա մատուցումը սննդարանին:

11. Խստով պահպանել նյութկույտերի միջանցքների նորման:

12 Տեղերի հրդեհային պահակի վարիչները պետք է ընդլայնեն իրենց գիտելիքներն և նախազգուշական միջոցառումները: Վաշտերի մեջ պատշաճ բարձրության վրա դնել դիսցիպլինան՝ ծավալելով սոցմրցություն և հարվածայնություն գործարանների հրդեհային պահակի գործի լավագույն կազմակերպության համար: Խորագույն ուշադրություն դարձնել գործարանների ապահովությանը հրդեհային կայքով, սարքավորումով, շիջուցիչ միջոցներով:

13. Գնման կայաններում, պաշտոնյաների շարքից նշանակել հատուկ անձինք, վորոնց վրա դնել՝ կայանի հրդեհային կայքն ու շիջուցիչ միջոցները վողջությամբ և բարեկարգ վիճակի մեջ պահելու պատասխանատվությունը: Բամբակագործարանների հրդեհային պահակի վարիչներին պարտավորեցնել՝ պարբերաբար շրջել գնման կայանները նախազգուշական ձեռնարկումներ իրագործելու և նշանակված անձանց հրահանգելու համար:

14. Գնման կայաններում նախատեսել՝

ա) Ջրամբարներ ջրի անհրաժեշտ պաշարի համար.

բ) Տակառ ջրով և դույլերով,

գ) Հրդեհաշեջներ և

դ) Քանդիչ գործիքների վորոշ մասը:

15. Գնման կայանների բակի հրապարակը լուսավորելու համար ձեռք բերել գազային լապտերներ (այնտեղ, վորտեղ էլեկտրական լուսավորություն չկա):

XI ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԿՈԼՏՆՏՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԲԵՐԲԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ:

Գործարանների մասնակցության ընդհանուր բնավորությունը

Բամբակազտիչ գործարանների մասնակցությունն առաջիկա բերքահավաքի կամպանիային ղգալի կերպով ընդարձակվում է համեմատած անցյալ տարիների հետ:

Բամբակազտիչ գործարանները, վորոնք իրենց տնորինության տակ են ընդունել մթերագործման ամբողջ ցանցը և դրա հետ կապված բոլոր գործառնությունները, ել ավելի մեծ չափով անմիջական չվման մեջ են մտնում գյուղացիական լայն զանգվածների հետ:

Այդ պատճառով, գործարանների վրա պատասխանատու պարտականություն է դրվում՝ գործունյա

մասնակցություն ունենալու բերքահավաքին նվիրված այն ընդհանուր մասսայական – քաղաքական կամպանիային, վոր անց են կացնելու շրջանային կազմակերպությունները, մեքենա – տրակտորային կայաններն ու Կոլտնտակենտրոնը։ Սոցիալիստական հատվածի ուժեղ զարգացումն և կոլտնտեսական շարժման աճը բամբակաբույծների միջավայրում հնարավորություն է տալիս գործարանին հաստատելու ամուր կապ բամբակաբուծական կազմակերպված ազգաբնակչության հետ՝ ամբողջ աշխատանքը ՄՏ կայանների և շրջկոլտնտմիությունների հետ շարահյուսելով։

Գործարանը, ՄՏ կայանների և շրջկոլտնտմիության հետ միասին, պետք է հանդիսանա գործունյա մասնակիցն այն պայքարի, վոր մղվում է կոլտնտեսական շարժման ուժեղության, նրա հետագա զարգացման և գյուղացիության բատրակ – չքավորական և միջակ զանգվածներին կոլտնտեսությունների մեջ ներգրավելու համար։ Նա պետք է մասնակցե սահմանված պլանները ճիշտ կատարելու համար մղվող պայքարին, նմանապես և այն պայքարին, վոր մղվում է ամեն տեսակ կուլակային և ոպորտունիստական յելույթների դեմ, վորոնց նպատակն է դանդաղեցնել և վիժել հում բամբակի մթերագործման ընթացքն և հավաքի ընդունված ժամկետները։

Մասնակցություն պլանները մինչև գյուղ հասցնելու գործին

Անդրժողկոմխորհի և Անդրյերկկոմի վորոշմամբ բոլոր շրջկուսկազմակերպություններին և շրջկոլտնտմիություններին առաջարկված է բերքահավաքի կամպանիայի իրագործման հաստատված պլանները հասցնել մինչև գյուղ, կոլտնտեսություն և արտադրական ընկերություն և կիրառել աշխատանքային պլանների մշակում։

Բամբակագործարանն իր գնման կայաններով պետք է մասնակցություն ունենա այդ աշխատանքին՝ հետամուտ լինելով, վոր կոնտրակտացիոն հանձնառությունները լիովին կերպով կատարվեն յուրաքանչյուր կոլտնտեսության և բամբակաբուծանհատականի կողմից։ Վորպես թուլության հայտնաբերում այդ հարցում՝ բերքահավաքի պլանները մինչև գյուղ հասցնելու ժամանակ՝ առաջ կբերի հում բամբակի հավաքի ու մթերման տեմպերի իջեցում և պրոլետարական պետության առաջ՝ բամբակաբույծների լայն զանգվածների ընդունած հանձնառությունների նշանակության թուլացում։

Կազմակերպչական – տեխնիկական միջոցառումներ, տրանսպորտի վերաբերյալ

Հում բամբակի հավաքի և փոխադրության հիմնական կազմակերպիչն է հանդիսանում Մեքենա – Տրակտորային Կայանը։ Ուրիշ պարտականությունների թվում, ՄՏԿ-ի վրա դրված է նաև կոլտնտեսությունների ապրյալի (տառայի) պատրաստությունն ու հում բամբակի փոխադրումների կազմակերպությունը՝ դեպի գնման կայաններ։

Բամբակագործարանը ծայրահեղ շահագրգռված է ՄՏԿ-ների թե մեկ և թե մյուս աշխատանքի իրագործմանը, մանավանդ, վոր հումուլթի տրանսպորտի կազմակերպությունն ու փոխադրությունը գնման կա-

յանից դեպի բամբակագործարան ընկնում է բամբակագործարանի վրա՝ ունենալով ՄՏԿ-ների կողմից տեխնիկական ոժանդակություն։

Տրանսպորտի կազմակերպությունը կհանդիսանա առավելագույն դժվար խնդիրը բերքահավաքի կամպանիայի ժամանակ։ ՄՏԿ-ների կիրառելիք աշխատանքը՝ հումքի, դեպի գնման կայանները կատարվող, փոխադրումների կազմակերպության վերաբերյալ՝ գործարանը պետք է շարահյուսե սայլատար տրանսպորտ կազմակերպելու իր աշխատանքների հետ՝ բամբակային շրջանների կոլտնտեսությունների և անհատական գյուղացիական տնտեսությունների քարշի ուժի կոնտրակտացիայի, նույնպես և ատաղ քարշի ուժի ներգրավումով վոչ բամբակային շրջաններից։

Բամբակագործարանների մասնակցությունը համագումարներին և ժողովներին բամբակահավաքի առթիվ

Անդրժողկոմխորհի և Անդրյերկկոմի վորոշման համաձայն, Անդրկոլկասի բոլոր շրջաններում պետք է կազմակերպվեն բատրակ – չքավորական լայն համագումարներ (կոնֆերանսներ)՝ բամբակահավաքի կամպանիայի հարցերին նվիրված և ՄՏԿ-ներին կից հատուկ ժողովներ (ՄՏԿ-ների ագրոնոմիական հողամասերում՝ կոլտնտեսությունների լայն համագումարներ, իսկ ՏԿ-ներին կից՝ հատուկ ժողովներ բամբակի հավաքի և մթերման հարցերի վերաբերյալ)։

Բամբակագործարանները պարտադիր են մասնակցել շրջանային համագումարներին և ժողովներին։

Բամբակագործարանը պետք է հանդիսանա պետական կազմակերպության նեկայացուցիչը, պատասխանատու լինելով՝ կուսակցական և կառավարչական, բամբակային կամպանիայի իրագործման վերաբերյալ, դիրեկտիվների ճիշտ կատարման, նմանապես բամբակի հավաքի և մթերման պլանի կատարման համար։

Բամբակագործարանն, իրեն ակտիվ մասնակցությամբ բերքահավաքի կամպանիայի հարցերի մշակման և գյուղացիական մասսաների կազմակերպության՝ շրջանային Կենտրոնների, ՄՏԿ-ների և շրջկոլտնտեսությունների հետ միասին՝ կնպաստե բերքահավաքի կամպանիայի նորմալ կատարման և կամպանիայի ժամանակ ծագող դժվարությունների հաղթահարման։

Բամբակագործարանը պետք է հիշի, վոր «բոլոր կազմակերպությունների բամբակողմանի պատրաստականությունը բամբակահավաքի և մթերման կամպանիային, կոլտնտեսների և չքավոր – միջակ գանգվածների արտադրական աճող վոգևորության սմենալրիվ ոգտագործումը, միաժամանակ վճռական պայքար մղելով կուլակի դիմադրության դեմ, կապահովեն բամբակամթերման կամպանիայի ամենահաջող յելքը, կան նոր առաջխաղացումներ կոլլեկտիվացման բնագավառում և կարագացնեն բամբակային շրջանների վերափոխումը համատարած կոլլեկտիվացման շրջանների և այդ հիման վրա կվերացնեն կուլակությանը, իբրև դասակարգ»։

«Բարձրացնելով կոլտնտեսական և չքավորա–միջակ գանգվածների դասակարգային զգաստությունը,

ՀՍՍՀ ...

ե՛լ ավելի համախմբելով նրանց կուսակցության ղեկավարության ներքո՝ վճռական արշավ գործելու կուլակության դեմ, անողոք պայքար մղելով աջ և «ձախ» ոպորտունիստների — կուլակության գործակալության — դեմ, բամբակային շրջանների կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է ապահովեն 1931 թվի բամբակի բերքի հավաքի և մթերման պլանների կատարումն ու գերակատարումը»։ (Անդրժողկոմխորհի և Անդրյերկկոմի վորոշումը)

Տրեստի կառավարիչ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արդյունաբեր. – մթերագործ. սեկտորի դեկավար՝
ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Ազգային գրադարան»
NL0230159

54. 894

1356